


ՀԱՅԿ Տ. Ս. ՏԵՎԿԱՆՑԻ

ԸՓԱՑԱԾ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ



ԹԻՒՆԻՍ

1980

613.8

S-35

20 JUL 2010

613.8

S-35



891.54-3

ԵՓԱՑԱԾ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ

ՀԱՅԿ Տ. Ս. ՏԵՎԿԱՆՑԻ

□□□□□□

ԹԻՒՆԻՍ, -1930

13 AUG 2013

2845

ՏՊԱՐԱՆ ՊՈԼԻԳՐԱՖԻՊՐՈՑԻ

Գլավիտ 587, պատվեր 1791, քանակ 3000



43900-13

ՔԱՆԻ ՍՐ ԽՈՍՔ

Ի նկատի ունենալով ծխախոտի, այդ անտանելիորեն օփացած աշխարհակալի գործած նախճիրները, և այն տարբերությունը՝ վոր գոյություն ունի գիտակցաբար և անգիտակցաբար մեղանչողներու մեջ, պարտք զգացի, ըստ հնարավորություն այդ հանրածավալ մոլորության պատճառած վնասները այնպես մը պատկերացընել՝ վոր առաջինները (գիտակցաբար մեղանչողները) վերաբնեյին իրենց արարքը, իսկ յերկրորդները ձեռք փաշեյին ծխելէ:

Յուսով եմ, վոր ծանոթ և անծանոթ բարեկամներս չեն վշտանար այդ առթիվ գործածած քիչ մը խիստ դարձվածքներես: Խո չեյի՞ կարող խաթեր համար կեղծել: Չէ՞ վոր թմրածներուն սթափեցնելու համար՝ քիչ ուժով պետք է շարժել...

Յես հավատացած եմ նույնպես, վոր ամենամոլեռանդ ծխողներն անգամ, սրտի մտքը ընթերցումը ավարտելն վերջ՝ պիտի խոստովանեն, վոր յես անիրավ չեմ:

Արդյոք, մենք կարո՞ղ ենք ուրանալ, կամ ժխտել սարսափելի թույնի մը — ցիկոտինի թագավորությունը ծխախոտին մեջ: Թույն մը, վոր թեև դանդաղ, բայց հարատև կթունավորն մեր որգանիզմը և կքայքայի զայն:

Կարո՞ղ ենք ուրանալ, թե ծխախոտը կկապն մարդու ախորժակը, և մենք քիչ ուտելով և պակաս

անունդ ստանալով կթուլացնենք մեր կազմվածքը. կարծես ողնեղու՝ վորպես զի բարեկամ բացիլները ներս թափանցած պահուն՝ շատ նեղութունն չքաշեն...:

Կարող ենք ժխտել թե ծխախոտը (թուլներու այդ անգուգահան ծաղկեփունջը) կսիրե խոսեցնել մեր թոքերը—հազացնել մեզի, հազ մը, վոր հասունցող վտանգավոր հիվանդութեան անհազանքը կհնչեցնե միշտ...:

Իե՞ն չեմ խոսեր, կենդանի, մաքուր ողի ոգտակարութեան և ծխով սպանված, անմաքուր ողի վլասակարութեան մասին, վորովհետև դեռ չծնած յերեխաներն անգամ այդ բերանացի գիտեն:

Ոգտակարը թողած՝ քլասակարին վրա սիրահարվելը քիչ տարրորինակ չէք գտներ արդյոք:

Որական 3—4 անգամ ուտել՝ չմեռնելու համար, իսկ 30—40 անգամ ծխել՝ մեռնելու համար, այդ յեզմով...

Յեթե մեր գոյութունը (որպանական) պահպանելու համար ծխելը այնքան անհրաժեշտ բան մը լիներ՝ բնութեանը անպայման տարբեր գործարան մըն ալ պետի հեղինակեր միմիայն՝ ծխելու համար:

Իմ կարծիքով, մարդիկ կրկնակի թյուրիմացութեան մեջ չիյնալու համար՝ պապիրոսը պետք է ծխեցին իրենց քթերով: Ձե՞ վոր որենքով՝ մենք պարտավոր ենք շնչել քթով և բաց թողնել բերանով. ալ ի՞նչ իրավունքով մեր բերանը, վոր տրված է մեզի բացառապես անդառնութեան և խոսքի համար, չարաշահելով՝ ծխալբարի մը վերածենք զայն:

Ինձ կթվի, թե ժամանակ է, հին հասկացողութուն, նախապաշարում և մոլութուններու տակ ուժանակ գնելով՝ ող հանել զանոնք: Խո չի՞ կտրելի կույր գլուրայն՝ մեր հայր ու պապերեն սրբագործված մոլու-

թեան մը հետևելով՝ դարերով միշտ միևնույն ապուրը խառնել:

Միթե ներելի է հանդուրժել, վոր անհիշատակ ժամանակներե ի վեր, կծված, տակ ու վեր չունեցող, վողորմելի ծուխ մը, տասնյակ միլիոններով հսկա մարդիկ—հաճախ ճպերաքը աչերնուն—պեպեֆի մը պես խաղցնե իր կապտած մատներուն վրա...:

Այդ թիվ չճանչցող բազմութեան մեջ՝ դուք պիտի գտնեք և շատ ու շատ սիրելի դեմքեր: Ծահագործողին քովը շահագործվողն է սեղմված, տգետին քով իմաստունը: Ձեմ գիտեր, թե այդ ճշմարտութունը առանց կակիծի կարելի է խոստովանել:

Բայց այդ հարթուկը (պապիրոս) յեթե 40 տարի ալ ծխա՝ կնճիռ մը չպիտի կրնա հարթել:

Ճիշտ է, նա (ծխախոտը) ինչպես ալքոոլն առաջին անգամ, ձեր արամագրութունը բարձրացնելու պես բաներ մը կընե, բայց քիչ հետո կձգե զայն այնպես խորխորատի մը մեջ, վոր դուք հաճախ, զայն դուրս քաշելու համար կպարտավորվիք սրածայր կեռեր գործածել...:

Յե՞վ վորքան թանգագին կյանքեր կկրճատվին այդ սպաննիչ ծուխին մեջ՝ ի դժբախտութուն տառապող մարդկութեան:

Գիտեմ, շատերը հեգնական քմծիծաղով մը պիտի ըսեն. «հերորհնած, ամեն տեսակ անհարթութունները շտկվեցան, վերացան մոլութունները այս աշխարհիս վրայն: Միթե ալքոոլն, թղթախաղն ու ցոփութունը—իրենց մեծ ու փոքր դաշնակիցներով—պակաս աղետաբեր են մարդկութեան համար: Ալ ինչու խոշորները թողած՝ անպայման ծխախոտի ոճիքեն բռնել: Խեղճը ի՞նչ ըրած ունի վոր...»:

Ո՞վ կհանդգնի ըսել, թե դուք անիրավ եք: Բայց... վոզելից ըմպելիքներու, թղթախաղի, վնեռական և նման ախտ ու մոլութուններու ֆլասակարութեան մասին ահազին հատորներ կան գրված, մինչ ծխախոտի ֆլասակարութեան մասին՝ կարծես ընդունված չլինի խոսել, կարծես, ծխախոտի «աչքերու վրա հոնք կա» ըսելը քրեյական հանցանք մը լիներ: Կարծես ծխախոտի արտերեն բախտավորութեան գետեր հոսեցին: Այդ առթիվ գրված վեց ու կես յերեսնոց գըրքուկները ավելի շուտ հառաչանքի մը տպավորութիւն կ'թողուն: Մինչ, «ծիծեռնակի պատճառած ֆլասաները ստուգելու համար՝ Բաղդադ քաղաքը պետք է իջնել», կըսե ժողովրդական առածը:

Անտարակույս՝ ավելի վտանգավոր է այն թշնամին, վոր թագնված է անհայտութեան մեջ, և կամ զարմանալի բախտավորութեամբ մը կվայելի իր զոհերու համակրանքն ու... հովանավորութիւնը:

Յերկրորդ՝ ամեն տեսակ մոլութունները իրար շողկապված են արյունակցական կապերով. և նա՝ ով կամքի ուժ կ'ունենա հաղթել անոնցմե մեկն ու մեկին՝ նա անպայման կարող կլինի հաղթել և բոլորին:

Իսկ թե մոլութուններ կան՝ վորոնց առջև պետք է խոնարհվել անմուռնչ, և ուրիշ տեսակներ՝ վորոնց դեմ պետք է քաջաբար նակասել, յես այդ չեմ գիտեր... Գիտցածս՝ յեթե 50 ուրբիլի գողութիւնը հանցանք է և անվայելուչ բան, 5 ուրբիլի գողութիւնը չի կընար քաջալերութեան արժանի և խիստ վայելուչ գործ մը համարվել:

Ահա, սիրելի ընթերցող, ոգտակար դառնալու փափագն մղված՝ կջանամ ամբողջովին դիմակազերծ

ընել կաշուն պատուհար: Պատուհաս մը՝ վորուն դեմ պայքարելու համար զրահավոր, թնդանոթ և գնդացիք գործածելու պետք չկա: Բավական է մերկացնել զինքը գիտական բացատրութուններով, իրենց կամքի վրա հավատ չունեցողներուն կորով ներշնչել և վերեն վար իջնող, կամ վարեն վեր բարձրացող բարի որինակով՝ շախմատի հասարակաց թշնամին:

Յեթե ընթերցողը կգտնե, վոր իրավացի յեմ՝ թող նետե պապիրոսը յուր վոտներուն տակ և կանգնի անոր վրա յուր հասակի ամբողջ բարձրութեամբ: Հակառակ պարագային՝ իրավունք կուտամ իրեն ճեղքել գրվածքս*) և անդին շարտել**) և իրարու վրա այնքան ծխել, մինչև վոր ճանճերը ուշաթափ վար թափեն առաստաղին և ներքին գործարանները միահամոռն գործադուլ հայտարարեն:

Ուրիշ առակ մըն ալ լսեցեք:

Մարդ մը, անգիտակցաբար՝ ինքնասպանութիւն գործելու վրա յեր, բարեկամ մը, գիտակցաբար բռնեց անոր ձեռներեն, քարկոծել զայն, թե վոչ...

ՀԱՅԿ 8. Ս. ՅՆՎԿԱՆՑԻ

*) Այդպես բան չընել...

**) Գրասեղանին վրա...

ՀԱՅՐԱՊԵՏ ԱՂԱՆ

Սենյակը ասպատակող ծուխին մեջն գլուխ մը կբարձրանար: Այդ հազար և մեկ փորձանքներ համրող գլուխը 50 տարիներն ի վեր՝ Հայրապետ աղային կպատկաներ: Գլուխ մը, վոր յեթե չարամտորեն դղումներու մեջ խառնեյին, իսկույն աչքի կ'իյնար իր հասունությամբ, յուր ծխախոտի որիհնտացիան ընդունող դեղնավուն բեթերով և հայկական քթով:

Հայրապետ աղան այն մյուս աղաներեն անով կտարբերվեր, վոր յուր վոտնամաններեն զատ՝ ուրիշ կալվածքներ չուներ. ինչպես նաև տարբեր մշակներ՝ բացի յուր զույգ ձեռներեն:

Հայրապետ աղային վոտները Փոքր-Ասիայեն յեկած պետք եր լինեյին և շատ ել արժեքավոր, վորովհետև նա սովոր եր ծալապատիկ նստելով՝ զանոնք յուր տակը թաղցնել:

Նա այժմս ալ, միևնույն դիրքով բազմոցին վրա նստած, կունակը բարձին՝ կծխեր շարունակ, կարծես անով վանել կջանար այն անհանգստությունը, վոր իջած եր անոր սրտին: Այ՛, նա այդ որը բավականն ավելի շփոթված կթվեր: Կարծես կնախդգար, վոր այդ որը զարմանալի դեպք մը պիտի պատահեր: Հանկարծակիի չգալու համար՝ անհրաժեշտ եր նախապատրաստվել, և Հայրապետ աղան իսկույն գործի անցավ:

Նախ՝ սեղանը առաջ քաշելով՝ կպցուց յուր ծընկ-
ներուն՝ «միությունը ուժ է» կրկնելով: Ապա՝ բերդի
նմանող վիթխարի ծխատուփը անոր վրա դրավ: Անոր
կողքերուն յերկու հալատարիմ պահակներ կանգնե-
ցուց, — ծխաքարն ու չիբուխը: Լուցկիի տուփն ալ
պատրաստ վիճակի մեջ դրավ և իբրև քաջ զորավար՝
սկսավ սուուգել զլանակ-պատրոններու քանակը, վորո-
րեց հնաձևության և նորաձևության մեջ ճոճվող խան-
ձված բեխերը և... նա՛ այժմս պատրաստ եր դիմանալ
շարաթվա մը խիստ պաշարման:

Ըսենք՝ վտանգ չսպառնացող որերուն ալ, առավոտ
զարթնելուն պես՝ Հ. աղայի առաջին մտահոգությունը
կլիներ, ամենն առաջ ապահովել զինքն ծխախոտով,
ապա հոգալ ապրուստ-կապուստի նման յերկրորդա-
կան, յերրորդական հարցերու մասին: Չնայելով վոր՝
յուր իսկ խոսքով, «ամենամեծ ապշությունը գործե-
լն», այսինքն ամուսնանալն հետո՛ խաբան ու բալան,
յուր սուենկի պես բուսնող փոքրիկներու հետ գաղտնի
դաշնագիր մը կնքած, պարտիզանական հարձակումնե-
րով կհանեյին յուր հոգին... իսկ կարիքն ու նեղու-
թյունը այնքան պինդ բռներ անոր կոկորդեն, վոր
նա ստիպվեր եր գործել անբեկակայելիս — ծախել
յուր արծաթն հիանալի ծխատուփը, վորով նա ժա-
մանակին այնքան յերջանկորեն պարծեցեր եր յուր
զոքանչին և ընկերներուն առջև: Ծխատուփ՝ վորուն
զլանակները այնքան քաղցր էյին և այնչափ համեղ...
Նա շատ ու շատ կտրուտներու հետ հաշտվեր եր,
նույն իսկ յուր վոտքի մատներու բացակայության,
բայց յուր ծխատուփի կորուստին հետ՝ ամենևին:

Ի հաստատություն՝ թույլ տվեք ինձ բերել քանի
մը անցյալ-կատարյալ ապացույց-որինակներ:

I

Մեղրամիսը նոր է սկսեր: Հարսին ոժիտը կբացվի՝
Հ. աղան բարկացած և վիրավոր՝ կհրամայե իր
կնոջ, «անմիջապես հոր տունը վերադառնալ»:

Նորահարսը կհեկեկա և... կ'ուշաթափվի:

Բարեկամները սաստիկ կզայրանան...

— Ինչո՞ւ այս բոլորը:

Ջարհուրելի ան փափկան կատու թյամբ՝ հար-
սի ոժիտին մեջ հինգ քիլո ծխախոտ դրված չլինելուն
համար...:

II

Որ մը՝ քիլո մը ընտիր ծխախոտ կկորսվի տնեն:
Փոքրիկներու առամները կփշրվին, մասամբն ալ անմեղ
քիթը...:

Այսոր յերկինքը սաստիկ կ'որոտա և շանթեր կար-
ձակե: — Պատճառը: — Մի՞հա կացեք, անպայման դըժ-
բախտություն մը պատահած պետք է լինի Հ. աղայի
ծխախոտին հետ, և կամ... լուցկին ժամանակին վրա
չհասած:

III

— Հ. աղա, գլուխս կցավի, կոկորդս ալ հետը, ի՞նչ
ընեմ:

— Պառկիր ծխախոտով լեցուն բարձի մը վրա...

— Ջոքանչիս ալ՝ աչքերը կցավի:

— Ծծախոտաշուր կաթեցուր:

— Այդ խո քոռացավ...

— Ընդհակառակը ավելի կպայծառանա:

Յեթե Հ. աղան բժիշկ դառնար՝ անպայման յուր բոլոր հիվանդները ծխախոտով պիտի բժշկէր: Հարբուխ ունեցողներուն բուռնութի պիտի առաջարկէր: Արյուն կտրելու և վերք չորացնելու համար՝ ծխախոտի մոխիր: Ատամնացավի՝ պապիրոսի ծուխ: Փորացավի՝ ծխախոտակոմպրես: Ռեվմատիզմին՝ մասսաժ, ծխախոտի և սպիրտի խառնուրդով և այլն:

IV

- Այսոր մտածմունքը կապաննե ինձի,—հարցին՝
- Ծխիր,—կպատասխանէր:
- Դրամ չունիմ, պարտատերերը հողիս կհանեն:
- Ծխիր հողիս, և դարձյալ ծխիր:
- Անոթի մեռնող մարդուն ծուխն ի՞նչ կրնա ընել:
- Դուն չարաչար կսխալվես, ծուխն ե, վոր վերջի վերջո պիտի փրկե մարդկությունը...

Ինչպես կտեսնեք՝ յեթե ծխախոտը ծառի մը վրա բուսներ, Հայրապետ աղան պիտի պարտավորեցներ բոլորին, բժշկելու համար այդ ծառին կատարը բարձրանալ:

Քանի դեռ աշխարհս խաղաղ էր և հին հասկացողությունները հանգիստ իրենց տեղը թխսած կմնային, Հ. աղան գիշերները աղոթած պահուն՝ սովոր էր մըրմնջել:

«Ամենատուրը յերրորդություն,
Տուր աշխարհիս խաղաղություն,
Ծխախոտի... առատություն»:

Բայց, յերբ վոր համաշխարհային պատերազմը ծագեցավ և ուսմը մը յեկավ տանել յուր վտոներու յերեք

մատները, նա աղոթելը մոռցավ... բայց ընավ չմոռցավ ծխել՝ անոթի փորանց, ծխել՝ կուշտ փորանց, ծխել՝ տխրության ժամերուն, ծխել՝ ուրախության րոպեներուն, ծխել՝ քալած, նստած, նույնիսկ պառկած պահուն:

Չափազանցությունը բաժ չեմ լիներ՝ յեթե ըսեմ, թե Հ. աղան կսնաներ բացառապես՝ ծխախոտով և ցամաք հաց ու լոբիով, առանց գիտնալու՝ թե այդպիսի խառնուրդի մը ստացված անուշիկն մեջ վիսալին*) կգտնվի, թե վոչ:

Սառսիկ ընքեցաւեւ Հ. աղան՝ յուր բարեկամներու աչքեն բոլորովին ընկած էր, մարդ կողոպտելու շնորհքեն զուրկ ըլլալուն համար... Անոր սիրտը անսահմանորեն բարի յեր: Նա կփափագեր, վոր ամբողջ մարդիկ բախտավոր լինին: Լավ ուտեն և ծխեն, Լավ խմեն ու ծխեն, լավ հագնեն և ծխեն, և ընավ ան չքաշեն... ծխախոտի համար:

Բայց նա կմոռնար, վոր վոչ միայն բախտավորությունը՝ այլ և ծխախոտն անգամ, ինքն յուր վտարով չի գար. գայն ստանալու համար՝ յերբալ յեկ բերել ե հատկավոր: Այդ մասին մտածելն անգամ ավելորդ կհամարեր: Նա զգացումի մարդ էր և վոչ դատողության: Նա ալ, կարգ մը ազնիվ մարդկանց նման, կփափագեր, վոր պառկած պահուն, գլանակը վար դնելուն պես՝ արմավենին մեղմիվ խոնարհեր և քաղցրիկ արմավը զգուշությամբ տեղավորեր իր շնորհալի բերնին մեջ: (Ականջը լսուի...):

Ահա ձեզ տարբեր դրվագ մըն ալ:
Հ. աղան գեղեցիկ քույր մը կունենա:

*) Մնդի անդարար մասի քիմիական անունը

Խնամախոսները կուզան և կխնդրեն անոր և՛ ձեռքը և՛ վոտը շատ շնորհալի յերիտասարդի մը համար:

— Փեսացուն ի՞նչով կզբաղվի:

— Գրագրությամբ:

— Վոչինչ՝ գրելն ու կարդալը յես ալ կսիրեմ, բայց վերնատունը դատարկ չէ:

— Ամենևին:

— Դրամ ունի՞:

— Սրտիդ ուզածին չափ...

— Շատ լավ, խմել գիտե՞:

— Շատ քիչ, յերբեմն ճաշին:

— Բարի, գիտե՞ ծխել:

— Վ՛րջ:

— Կորսվեցեք ուրեմն. յես այդպես ապուշ և անշնորհք մարդու քույր սովող չեմ:

Խաղաղ գիշեր մըն էր:

Հ. աղայի կեսը (ամուսինը) փոքրիկներ և կիսափոքրիկները կքնանային արդեն կապույտ ծուխի մը խորհրդավոր շղարշին տակ: Բայց անոնց քունն ալ այնքան հանգիստ չեր. վ՛րջ այն պատճառով անշուշտ, վոր անոնք ալ բանի մը կապասեյին. այլ այն պատճառով, վոր հետզհետե թանձրացող ծուխը, մղձավանջի մը պես՝ չոքեր եր անոնց քնքուշ կուրծքերու վրա և կկեղեքեր անոնց թոքն ու շղերը:

Ժամանակ է, վոր քիչ թողունք Հ. աղային հոգեգմայլ ճախրել ծուխի ամպերուն մեջ, կամ սրտաբեկվի՞ յուր սիրելի ծխատուսին կորուստը վերհիշելով: Կամ՝ առժամանակ մը զբաղվի յուր մաքրասեռ հագով: Թողունք՝ վորքան վոր կ'ուզե, ի՞նչա ու կանգնի յուր

շարժված ուղեկին մեջ տատանվող և ընկնող հակադիր զգացում և գաղափարներու շփոթության մեջ: Թող մեկին զուխը կոխե, ճղմն մյուսին պոչը, և մենք քոփափ սենյակը մտնենք, հարցնելու յերիտասարդ ուսանող Լևոնի վորպիսությունը, վորը գրասեղանի մը առջևը նստած՝ կճգներ յուր անպաճույճ մենարանին մեջ, դասագիրք և տետրակներու մեջ կորած:

Նա՛ այդ շնորհալի ուսանողը, մեկ ձեռքով յուր խոհուն ճակատն եր բռներ, իսկ մյուսովը կջանար յետ մղել այն անամոթ ծուխը, վոր յուր և Հ. աղայի սենյակի մեջտեղը ընկնող դռան արանքներեն ներս սողոսկելով՝ անպատկառորեն յուր թոքերուն մեջ կխուժեր, առանց անոր դռները ծեծելու և հարցնելու... «Կարելի՞ յես»: Պարագա մը՝ վոր սաստիկ կշղայնացներ մաքուր ողի սիրահար ուսանողին:

Քանի անգամներ խնդրած եր Հ. աղային չափավոր լինել, բայց անողուտ: Քանի անգամներ պարզեատըրված եր հարբուխով, չար ձմրան՝ սենյակի դուռն ու պատուհանները միասին բաց թողնել պարտավորվելուն համար:

Յեթե ծուխը քիչ թուլանար՝ վրա կհասներ Հ. աղայի դրդեցնող հազը և անհնարին կդարձներ աշխատանքի շարունակությունը: Նա մատնված եր անյեղանելի դրության, և յեթե ինքը բարեկերթ չլիներ, և Հ. աղայի կնոջ մայրական հոգատարությունը մեջտեղ չիյնար՝ յերկու հարևանները շատ վաղուց պատռած կլինեյին իրարու գլուխները:

Այնուամենայնիվ՝ Լևոնը այդ որ սովորականն ալելի զվարթ եր: Նա գրքույկ մը գտեր եր, և ի նկատի ունենալով Հ. աղայի ընթերցասիրությունը՝ վերջին

փորձը կընեն, գոնե այդ գրքույկով ազգել անոր վրա: Նա արդեն ծրարեր եր զայն և կպատրաստվեր ներս շարտել՝ Հ. աղային հազը վերադառնալուն պես:

Հազը չուշացավ հայտնագործվել: Լևոնը վեր թռչելով տեղեն, զգուշ Հ. աղայի դասն մոտեցավ և բաց պատուհանեն հաջողությամբ ներս շարտեց գրքույկը, վոր անավոր ճայթյունով մը տապալվեցավ սենյակին ճիշտ մեջտեղը:

Ավելորդ է ըսել, թե խորասուզված Հ. աղան գուհաթափ՝ կես մեթր վեր թռավ նստած տեղեն, խորտակելով յուր բոլոր ամբողջունները... և դողացող սրունքներով արշավեց տապալվող ծրարին վրա: Իսկ անոր պարունակութունը...: Հ. աղան զայն ստուգելն առաջ՝ հարկ տեսավ քիչ մը խորհրդածել. սրտի անհանգիստ շարժումներն ալ միևնույնը կթելադրեցին:

«Սիրաբույր նամակներու տրցանկ մը արդյոք, (բայց յես սիրահար չունիս.) իսկ չե՞ր կարող պատահել, վոր... կապոց մը թղթադրամ հայտնվեր հանկարծ»:

Այս հրաշալի գյուտը այնքան վողկորեց Հ. աղային, վոր նա խելագար՝ ծրարը հափշտակել և շապիկը պատռել մեկ ըրավ: Կարծես կուժ մը սառ ջուր լեցնեցին խեղճին վրա, վորովհետև ծրարի մեջն գլուխ գուրս հանեց գրքույկ մը «Շփացած աշխարհակալ» վերնագրով: Շփացած բառը անոր անձանոթ չեր, վորովհետև յուր մեծ վորդին հրաշալիորեն շփացած, այսինքն շատ յերես առած եր:

Հանելուկը լուծված եր: Այդ՝ յուր դրացի ուսանող Լևոնի սարքած խաղը կլիներ անպայման: Ինչո՞ւ գարմանալ, չե՞ վոր հողույն սրբո վկայությամբ՝ այդ որը արտակարգ բան մը պիտի պատահեր, և Հ. աղան իս-

կույն հիշեց նախորդ գիշերվա յերազը յուր ծխատուփը փախցնող տարրերինակ թռչունով. հիշեց նույնպես Լևոնի սպառնալիքը և զլիս ընկավ:

«Դեհ... քանի վոր քունս ալ ուշ կուգա՝ ոգովինք առիթնն, գուցե մեջ բան մը գտնենք: Լևոնը թեև ինձի վախցուց՝ բայց կարելի չե անոր չնեղել...», յեղրափակելով՝ սեղարը վառեց, վրիպող արծվի մը նման հավաքեց յուր փեշերը և ծալապատիկ նստելով՝ սկսավ կարգալ լարված ուշադրությամբ:

У 3 200-63



II

ԱՇԵԱՐՀԱԾԱՎԱԼ ՄՈՒՆԹՅՈՒՆ ՄԸ, ՎՈՐ ԱՆՈՐԻՆԱԿ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԸ ԿԸ ՎԱՅԵԼԵ ՅԵՐԿՈՍԱ-
ՆԻՆԵՐՈՒ ՄԵՋ:

«Անշուշտ քաջ և սիրելի յե այն մարդը,
վոր պատնեշին այս կողմը կանգնած՝
որհասական կռիվ կմղե հին աշխարհին
դեմ, բայց և պակաս քաջ չե այն կըտ-
րեճը՝ վոր հին մոլութունն մը կզբրե
յուր վտաններուն տակ»:

S. 2.

«Արդյո՞ք, թշնամիներս ավելի բաղմաթիվ են, թե
բուրժուական դիպլոմատիայի գործած վոնիքները»,
անն այսպես մտածմունք մը, առավոտ վաղ-վաղ բռնեց
ոճիքես:

Թե յես վատ մարդ չեմ՝ թե ճանճի մը քր՞ե ըրած
չունիմ, թե հյուսվածքիս մեջ «հավելյալ արժեք»-ով
կառուցված բջիջ մ'անգամ չկա, հայտնի և բոլորին:
Այ ուրկե՞ և ի՞նչ յեղանակով վաստկեցա թշնամիներու
այն անուելի, միլիարդանոց բանակը՝ վոր ամեն ըոպե
կազմ ու պատրաստ ե դժոխային խարույկներ վառել,
վրան անմեղ քիթ մը խորովելու համար:

Ինչո՞ւ դարմացած յերեսս կնայիք, ո՞վ անհավատներ:

Անպատճառ յերգում պետք ե ուտել, որինակ՝ հայր
Պղոստոսի¹⁾ կամ վորդի Չեմբերլենի գլուխներով,

¹⁾ Դժոխքի չաստված:

վորպեսզի հավատաք ըսածներու ճշմարտության: Ինչ
լավ, վոր վնչ միայն ազգերու Լիգային անդամ չեմ,
այլ անոր դավադիր դռներու ճամբան անգամ չզգտեմ,
ապա թե վոչ՝ ո՞վ հավատ պիտի ընծայեր խոսքերուս...:

Միթե հայտնի չե ձեզ, քե ամեն անոնք՝ վորոնք
ծխախոտի գլանակ մը կը սնկեց իրենց բերաններու մեջ,
իմ ամենամեծ բեռնափնեքն եմ. վորոնք՝ ուր ալ գտնը-
վիմ, գլուխս կ'ողակեն իրենց խեղդող դազ-ծուխով և
հայրս կ'անիծեն:

Չարմանալին՝ այս արկածյալ քթովս մեկ քիլոմեթր
հեռավորութենեն իսկ այդ դժոխային ծուխի բուլբն
տանելս ե:

Վորքան բախտավոր պիտի դառնայի, յեթե հնա-
րավորութուն ունենայի քիթս տուն թողնելով դուրս
գալ, վորովհետև այն ատեն վոչ միայն թշնամիներու
ներկայութունը սոսկում չպիտի ազգեր ինձի, այլ և
հավանաբար՝ ազատվելի այն հաճախակի հրաբխային
բռնկումներեն՝ վորոնք այնքան սովորական են պատ-
կառելի քթիս համար:

Բարբախտաբար՝ յես չեմ դիտեր, թե աղնվազարմ
ծխախոտի շնչառութենեն ողի քանի՞ յերրորդ մասը
կապականվի:

Տարին վորքան հրդեհ և պայթումներ կ'առաջանան
ծխելեն:

Քանի՞ ծխամորձ և գլանակներ կվարակվին վենե-
րախտով և քանի՞ անմեղ շրթունքներ վարակելու պատ-
ճառ կդառնան...

Յեվ... Քանի՞ հարյուր հազար բանվորներ կկազմա-
լուծվին ծխախոտի փոշիին մեջ պարող թույնեն՝ վո-
րուն քիմիագետները նիկոտին անուն կուտան:

Բայց դժբախտաբար գիտեմ, վոր այդ նիկոտին կոչված թուշենն՝ վեց կաթիլ կբավե փիղ մը շուռ տալու համար: Ձեք հավատար:

Անցյալները՝ Նեղոս գետը ափ կնետե յերիտասարդ կոկորդիլոսի մը դիակ: Կուղեյիք իմանալ աղոր պատճառը:

Այդ կոկորդիլոսը մարդ մը կկլլե. այդ մարդը գըրպան մը կ'ունենա, այդ գըրպանը հղի կլինի 30 տարեկան ծխամորձով մը, վոր յուր յերկար աղիքի նմանող ստամոքսին մեջ կկրեր 20 կաթիլ խտացած նիկոտին...

Յեթե զարմանալի հրաշքով մը՝ աշխարհը բարեհաճեր յուր իշխանութունը գոնե քանի մը ոբող արամագրութեանս տակը դնել, գիտեք, թե ինչ պիտի ընեյի:

Հը՛... անպայման պիտի խիզախեյի և փրկարար շեղում մը կատարելով, նախ պիտի նետվեյի այս վոտներու առջևը կարող ողիի տիկերու և գիւնիի տակառներու վրա և կուղեներովս ջարդ ու փշուր պիտի ընեյի զանոնք, հոգ չե թե՛ նոր ջրհեղեղ մը սպառնար աշխարհին...

Ապա բուն նյութիս վերագառնալով՝ խանդավառութեամբ կրակ պիտի ցայի ծխախոտի բոլոր տեսերը... Հոգ չե, թե թոքերու բժիշկներեն շատերը անգործութիւնն անձնասպանութեան գործեյին, և աշխարհիս տերերը «արտակայութեանս իրավունքը» վտաքի տակ տալով՝ կախեյին ինձի քթես, իրենց պատճառած ֆլաններու համար:

Յես կախադանիս վրայեն ամբողջ ուժովս պիտի ճչայի:

«Մեղք չե՛ աշխատող ձեռներուն կողոտել՝ թոքեր կրծոտող, ֆլասակար և վոտից ցզուլս ռեակցիոն բույսի մը տիրապետութեան սահմանները ընդարձակելու համար: Մինչ անդին՝ ցորենն, բրինձն ու բամբակը հողի համար՝ իրարու գլուխը կջարդեն:

Գիտե՛մ, տնտեսավարները պիտի խոփոռն իրենց դեմքը, և ծխողները կիկնի դատաստան պահանջեն: Թող պահանջեն, նահանջող չկա: Միայն թե՛ այդ «սատանայի բուրվառ» նետող, իրենց թոքերը սև ներկող ջնտլմեները թող բարի լինին հրեզեն լեզվով բացատրել մոլորվածիս, թե՛

Ինչն կստիպե իրենց անպայման ծխել՝ դեռ չստուգած, թե մեր հարգոմեծար նախապապ—կապիկն ալ կծխեր արդյոք: Թե՛

Ինձի անձանոթ լինչ գերբնական, սիրելի և ոգտակար բան մը կա այդ նոյովից արմատ խոտարույսին մեջ, վոր մարդկանց մեծագույն մասը, այնքան համառութեամբ և նվիրված յերկյուղածութեամբ՝ իրենց հպարտ գլուխները անոր վոտներուն տակ կդնեն...

Գուցե յես ճաշակ չունիմ, չեմ գիտեր իմ բերնի համը, խնդրեմ, բացատրեցեք և հավատքի բերեք հերձվածողիս:

Շատ եմ զարմացած և դեռ կշարունակեմ զարմանալ այս տերտերներու խելքին: Միթե՛ նորապսակներն ալիլի ամուր կապով իրարու կապելու համար նպատակահարմար չեր լիներ, փոխանակ պատուիդ լաքով մը անոնց յերջանիկ գլուխները իրարու միացնելու՝ միացնեյին զանոնք հաստ ու յերկար պապիրոսով մը:

Այն ատեն գեր թնդանոթն անգամ՝ անզոր պիտի գտնվեր զանոնք իրարմե բաժանելու...

Ը Ն Կ Ե Ր Վ Ռ Ա Մ Ը

Յես մեղավորս՝ Վրամ անունով ընկեր մը ունեյի՝
Նա ալ ինձ պես, յեթե չամչնար՝ փողոց պիտի
յեղներ, ճակտի վրա իսկ խոշոր տառերով գրած,
«Կինդրվի չծխել»:

Ընկեր Վրամս, վոր ժամանակով սովոր եր հաճա-
խակի բռնկվել հայրենասիրական նուպաներով, յուր
ծանոթներու մեջ, յուրատեսակ հեղափոխական պրո-
պագանդ մղած միջոցին, յերբ տեսներ, վոր անոնք
կծխեն՝ իսկույն առիթեն ոգտվելով,

— Դուն՝ վոր կփափագես հեղափոխական դառնալ,
հեղափոխականի վայել կամֆի ուժ ունիս արդյոք:

— «Այո», պատասխանն ընդունելուն պես՝

— Դեհ, շուտով վար նետիր ուրիմն բերնիդ գլա-
նակը և ծխատուփդ փշրեր վոտներուդ տակ...

Անշուշտ՝ անոնցմե վոմանք հանկարծակիի գալին
կամ ամոթեն կնետեյին, բայց մեծագույն մասը պա-
ղատագին,

«Կարելի չե՞ գլանակս ավարտեմ և ապա...» բնորոշ
պատասխանը կուտային:

Ինձ կթվի, թե մարդուս կամքը հրաշալի գործիք
մըն ե, վոր ժայտերն իսկ կծակե, բայց ծխախոտին
դպչելուն պես՝ կփռվի... Ինչ ցավալի բեկումն:

Ականջը խոսի մեր պատանի, յերիտասարդներուն,
վորոնք ապագան իրենց յերկաթե ուսերուն վրա
առած՝ պիտի տանեն և անպսաս իր տեղը հասցնեն:

Կ Ո Չ

Ո՛վ պատանի, յերիտասարդներ, բարեկամաբար ձեր
ականջներուն կմոտենամ. մեծերեն ալ հույս չկամ: ¹⁾

Յեթե պատերազմական գործողություններու հետե-
վանքով և կամ «շարունակելի» սիրահարություններու
պատճառով ձեր ականջներեն դեպի ուղեղ ձգվող ճա-
նապարհը քանդված չե՞ բարի յեղեք, ըսածներս ամ-
բողջութեամբ հաղորդել ձեր վեհափառ ուղեղին, վորը
յեթե որ ցերեկով քնանալու սովորություն չունի,
անպայման պիտի հրամայե ձեր մկանուտ ձեռներուն
շարժվել, մի անգամ ընդմիջո՝ դուրս քոքափելու ձե-
րիցսաարդ գրպաններու մեջ քանձրացած ծխախոտի
փոշին. և բաց չթողնելու ձեր ոճիքը, մինչև վոր ազ-
նիվ խոսք չտաք, զոնե հարյուր տարի չծխել...

«Շատ դժվար ե» չպատասխանեք, ամոթ ե: Այդ
խոսքը այնքան կսազի յերիտասարդ շրթունքներուն՝
վորքան վոլորված բեխեր քսան տարու որիոր-
դի մը... Միթե արժանապատվութեան զգացումը
փտած թելով մը միտայն կախ ե ընկեր ձեր կորովին:
Ձեմ ուզեր հավատալ, վորովհետև ձեր հասակակիցնե-
րեն շատերը քաջագործութեան հրաշալի որինակներ
յին ցույց տված:

Վստահ եմ, վոր դուք՝ ով վառվռուն հոգիներ, զայ-
րույթով վար պիտի նետեյիք պապիրոսը ձեր դեռածման
շրջանը չավարտած շրթներեն՝ յեթե գիտենայիք վոր՝

¹⁾ Թեև անոնց մեջ ալ կգտնվին իրոք մեծ մարդիկ՝ վորոնք
20—30 տարի ծխելե վերջ՝ հանկարծ կթողուն

I «Ծխողներու քաշը 20 տոկոս պակաս կկռնե». և այդ թեթևության համար, վնչ հանրակառքն և վոչ ալ շոգեկառքը կոպեկ մը զիջողությունն չեն ընել ձեռքի...:

II Թե՛ «Ծխողներու հասակը 20 տոկոս կարճ կ'մնա» վորպիսիները բազմության մեջ թաղված մնալով՝ յեթե չար այծի պես ալ վեր-վեր թռչկոտեն, դարձյալ չպիտի հաջողեն տեսնել անցնող մեծ դեմքը, վորոնն վրա կ'մեխվին բյուր հրացած աչքեր...:

Իսկ յեթե այդպիսիները հանկարծ լըջորեն սիրահարվին իրենց կրկնակի բարձրությունն ունեցող աղջկա մը վրա...:

III Ուրեք են ասոնք, վորոնք հազիվ 12 տարու վորքերիկ մը շրջապատած՝ հանդիսավոր թափորով հառաջ կ'ընթանան: Յեվ ո՞վ է այն փոքրիկը, վոր հպարտ կեցվածքով մը կ'ծխե և կ'քալե ինքնավստահ, թիկնապահներով շրջապատված արքայազնի մը պես:

— Ո՛ր... նա փոզոցի ինքնաբույս հերոսներեն է, վորոնք սովոր յեն իրենց ձեռները սխալմամբ՝ միշտ ուրիշներու դրպանին մեջ խոթել, անոնց պարունակությունը ճշտելու, կամ... թեթևացնելու համար: Ավելորդ անգամ հաստատելով վիճակադրական այն ճշմարտությունը, թե՛ «մանկահասակ գողերեն՝ հարյուրին ութսուն յերեքը ծխողներ են»:

IV Թե՛ յեթե կարգ մը մարդիկ սեղմեն՝ անմտություն կ'ծորա, իսկ յեթե «25 պապիրոս սեղմեն՝ կաթիլ մը նիկոտին» վորը կ'բավե, քաջաոողջ մարդ մը շենքով, շնորհքով սպաննելու համար:

Ըսել է թե՛ յեթե անվարժին մեկը հիմարությունն գործե իրարու վրա 25 պապիրոս ծխել, պիտի պարտավորվի, վերջին ծուխն ու շունչը միասին փչել: Որեն 40-50 պապիրոս ծխող հերոսներու ականջը թող խոսի:

Իսկ ո՞վ չգիտեր, թե ծխողները հաճախ՝ մեծ հալում մը կ'ցուցնեն դեպի վոգելից ընպելիները: (Չե՛ վոր հրդեհը մարել է հարկավոր...) Քայլափոխ մը կ'բավե Բագոսին գիրկը գլորվելու համար:

Իսկ այն պատանիները, վորոնք դատապարտելի փութկոտությամբ, խիստ վատ տեսակի պրովակացյայի յենթարկվելով՝ կ'սկսեն ծխել ուսանողի նստարաններու վրայեն՝ ավելի լավ գործ մը ըրած պիտի ըլլան, յեթե հաստ ծառե մը հաստ թոկ մը կախեն և կախվին անկե, վնչ թե մարմնամարդության՝ այլ... հոգեմարդության համար: Վորովհետև այդպիսիներու համար, որեն քանի մը անգամ արևու խավարումներ կ'պատահին. և յեթե հաղար «Ձագես» ալ վառվի՝ չպիտի հաջողվի վանել այն մառախուղը, վոր պապիրոսեն կ'իջնե «խառնելու ձեր թարմ ուղեղը, բթացնելու ձեր հիշողությունը, դարձնելու ձեզ անընդունակ, հիվանդկախ, դյուրազրգիւ և նույն իսկ անքաղաքավարի»:

Չեմ գիտեր, թե դուք, յերբևիցե մոլություն մը գետին զարկած եք, և վայելած հաղթանակի խելահեղ քաղցրությունը...:

Ահա ձեզ չափազանց բարի աշակերտ մը, վոր խիստ չար ապտակ մը կ'իջցնե իր ամենասիրելի ընկերոջ յերեսին, և կ'ավելցնե «Այդպէս կ'սիրես զիս, անպիտան...» — պատճառը:

— Վորովհետև՝ այդ իր ութ որե ի վեր ծխել սկսող ընկերը, դասամիջոցին պապիրոս մը կ'հրամցնե իրեն...:

Յեթե բոլոր աշակերտները այդ ձևով վարվին՝ ծխամոլությունը չպիտի համարձակվեր տարածվել աշակերտներու մեջ, և այդ զգվելի օեկ ո՞ճը չպիտի հանդգներ սողալ, նույն իսկ, զիրտության տաճարն ի վեր:

Այնպես վոր, յեթե ձեր շարքերուն մեջ դառնալին այդպիսի մոլորվածներ՝ առանց ապտակներու ողնության դիմելու (չե՞ վոր քիչ բռնապետական է) նախ՝ ջանացե՛ք համոզել, ապա խստիվ հանդիմանեցե՛ք, յեթե այդ ալ չողներ՝ քաշ տվե՛ք զինքն և նստեցուցե՛ք կոշիկ ներկողի մը աթոռին վրա, վորովհետև ավելի լավ է անծանոթ կոշիկներ ներկել, քան ծանոթ, մատղաշ թոք ու սրտեր...:

Յեթե ծխելը ոգտակար բան մը լիներ՝ պիտներենուն չե՛ր արգիլվե՛ր ծխելը և մեծն Լենին յուր գրասենյակին ճակատը չե՛ր զարդարեր, իր կամքին պես կտրուկ նախադասութեամբ մը, — «խստիվ կ'արգիլվի ծխելը»:

Այն հանգամանքը՝ վոր ծխախոտն կարճեր է և դեռ կշարունակե կարճել, մեզ բոլորիս համար շատ թանգազին կյանքեր, պետք է սրե մեր ատելութունը դեպի այդ անիծված ծուխը և վերջնականապես խզել տա մեր դիվանագիտական հարաբերութունները այդ բուրբ դանակով մորթող դահճին հետ, վոր սովոր է Ֆիզկուլտուրայի մեկ տարվա շինածը քանդել քանի մը ժամվա մեջ... տգեղացնելով մեր արտաքինը և ներքինը փճացնելով:

Տալ ուրեմն այդ անպիտանին (ծխախոտ) արժանի հակահարված և կրճել յեռանդազին «գիտության գրանիտը»:

V

ԻՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՊԱՊԻՐՈՍԻՆ

Շատ լավ կհիշեմ:

Հազիվ յոթն տարու կայի, բայց արդեն վաղահարույց սատանա մը սկսեր էր շարժել դեռ անկազմա-

կերպ, փոքրիկ ուղղոս և հրել զիս դեպի անծանոթ շահատակութուններ:

Այդ ժամանակներ Գրիստոսը՝ ըստ յուր բարի սովորության, տարին անգամ մը, շատ կանոնավոր կերպով կձնեք, կմեռնեք և... հարություն կ'առնեք:

Յե՛վ վորովհետև լուսահոգի հայրս ինձ նման անհավատ չե՛ր՝ հարության տոնը ջերմեռանդորեն կտոնեք, և շաբաթ մը առաջ՝ յեռանդազին պատրաստութուններ կտեսնեք, ըստ արժանույն պատվելու շնորհավորության յեկող բարեկամներուն. սեղանի վրա շարելով այն ամեն բարիքներ, վորոնք կարող են ստամոքսը խնդացնել և զայն կրողը խենթացնել...:

Ավելորդ կհամարեմ նկարագրել հոս՝ կարմիր և սպիտակ ծովերու, այսինքն գինիի և ողիի տակառ և կարասներու մեջ առաջ յեկած մակընթացութուններու, տեղատվութուններու, փոթորիկներու և նավաբեկութուններու մասին — որվա բերքի մասին, վորովհետև Բագոս արքայն կարող է բարեկանալ և... պատիվ պահանջել:

Ահա մեր գեղեցիկ հյուրանոց — սենյակի դռներն ներս մտան խուճբ մը ընտիր բարեկամս, բոլորն ալ մաքուր հաղնված:

Մեծ յեղբայրս հյուրասիրեց զանոնք զինիով, ողիով, կոֆեով և քաղցրավենիներով:

Իսկ հայրս իմ շնորհքն ալ ցույց տալու համար, հրամայեց ինձի, սիգար հրամցնել հյուրերուն:

Խաբեքս համար՝ բոլորն ալ վերցուցին և միաբերան սկսան ծխել այնպես վեհափառ կերպարանքով մը, վոր յես քիչ ֆուսց հիացմունքես շոգիմանայի:

Ստտանան իսկույն ականջիս կպավ և՝

— Կտեսնես այս բախտավոր մարդիկ, և գիտես, թե վորքան հրաշալի բան է ծխելը: Չես ուզեր արդյոք, դուն ալ մտքդ դառնալ:

Առաջարկն շատ հրապուրիչ թվեցավ ինձի, և յես վճռեցի անսլալման մտքդ դառնալ: Բայց այդ վճիռը ընդունելես առաջ՝ փորձիկ առարկություն մը դրի մենտորիս առջևը:

— Չե՞ վոր անոնք բեխեր ունին, մինչ յես...

— Քնի յեղիք, դուն ալ շուտով կ'ունենաս— պատասխանը սրտապնդեց ինձի, և յես սրտատրոփ սենյակի պարպկելուն կսպասեյի, մեծ մտադրությունս ի կատար ածելու համար: Յե՞վ ո՞վ յերջանկություն, բարեկամները հայրս ու յեղբայրս հետերնին առած՝ այցելության գացին:

Սենյակը բոլորովին դատարկ եր... և յես իշխանական քայլվածքով մը մոտեցա սեղանին, վորուն վրա պլանակները հոգնած ուղմիկներու նման, իրարու վրա ընկած՝ կքնանային կարծես:

Յես անոնցմե մին դարթեցնելու վրա եյի՝ յերբ խիղճս դեմս առավ և հանդիմանական շեշտով մը՝

— Այդ ի՞նչ կ'ընես... ըսավ:

— Ի՞նչ պիտի ընեմ, հատ մը պիտի վերցնեմ, ըսի:

— Վերցնելս վորն է, գողանամ չըսես...

Կարծես սրտիս մեջ սուր մը խրեյի: Ստտանան բոթեց ինձի և ըսել տվավ.

— Մի՞թե յես իրավունք չունիմ վերցնելու հորս ապրանքը, և...

— Բայց հայրդ հոս չէ, ո՞վ ավագակ:

Ստտանան բարկացավ խղճիս վրա և հրամայեց ինձի ապտակ մը դարնել անոր յերեսներուն:

Յես ինքզինքս կորսնցուցած լինելով՝ մեքենայաբար կատարեցի անոր հրամանը և պապիրոս ու լուցկին հափշտակել և ճառագայթարձակ տանիքը թռչելս մեկ ըրի. (Չմոռնամ ըսել, վոր մեր տանիքները հարթ եյին). և վառ հետաքրքրությամբ ու կրակված յեռանդով լուցկին քաշելս և հասակես վոչ այնքան կարճ սիգարս վառել և ամենայն անպզուշությամբ՝ ծուխը ուժգնորեն ներս քաշելս մեկ ըրի... և ինչ վոր ինձի պատահեցավ՝ թող արյուն խմորիս չհանդիպի:

Վանա բերդը, այդ գեղեցիկ հսկան, վոր հեգնական հայացքով գաճաճիս հերոսությունը կղիտեր՝ ըսպեսպես շուռ յեկավ վրաս... Այն պայծառորեն շողացող դարնանային արևը խավարեցավ աչքերուս... Բերանս այնպես մը դառնացավ ու կակծեց, վոր կարծես ավ մը պղպեղ ու խինին միասին բերանս լեցնեյին, լեզուս քաղվեց և փայտի մը պես անկվեցավ կապ ընկած բերնիս մեջ: Միտս խառնել սկսավ: Թոքերս պատասպատա ընող ոթոմոթիք հազեն քիչ մնաց խեղդվիյի: Ամբողջ ուժովս ճչալ և ողնություն կանչել կ'ուզեյի, բայց շունչս կապված եր և բարի մեկը չկար, վոր զայն արձակեր: Ուռած, կարմրած աչքես հեղեղի նման արցունքներ կհոսեյին: Կուրծքս բռնած խելագար թռիչքներ կկատարեյի: Գլուխս հողմապացի մը պես կղաւնար: Վճ դարհուրելի վարկյաններ...:

Թե յերբ և ի՞նչպես անդին եմ շարտեր լուցկին ու պապիրոսը, յես այդ չեմ հիշեր. միայն այսքանը կհիշեմ, վոր անոնք յերդիքի ծակեն գացեր և ընկեր եյին մեր մառանը և... (մնացյալը քիչ հետո):

Դեռ մեծ բախտավորութիւն պետք է համարել, վոր այդ սարսափելի շփոթութեան մեջ յես ալ գլորվելով վար չընկա յերդիքի ծակեն ներս, վոր բերանը անճոռնի կերպով յերկնքին չուած՝ կհայհոյեմ, թե կ'աղօթեր ինձ նման մեղավորներու հոգու փրկութեան համար... մեղավորի՝ վորու պատիժը դեռ ավարտած չէր, վորովհետև չանցած հինգ բուսի, ծծումբի կծու հոտ մը, խանձվածահոտի մը հետ խառն սկսավ բռնել չորս դին, և մեր յերդիքն սկսավ մուխ և բոց շնչել, կարծես նոր Վահագն մը պիտի ծներ: Ով չարագետ պատահար... և դիտեք բանը ինչպես գլուխ յեկավ:

Մոտ կես դար առաջ՝ մեր մայրիկները իրենց նախապատմական թոնտիրները կվառեային գլուխները ծծմբագոծ, արշնաչափ յերկար ու չոր ցողուններով (կանեփի) և այդ ցողունները խուրձեր կապելով կկախեային մառանի պատեն, վորոնց ներքեւ թիկնապահ կկանգնեցնեային զավուրմայի, թթվի և այլն կարասներ: Իսկ վերեն ալ իբրև քաղաքական հանցավորներ կկախեային չորացած համեմներ, կտավի տոպրակներու մեջ շարած: Յեւ ինձ առաջնորդող սատանան՝ վար նետած լուցկի և պապիրոսի ձեռներէն, թե վտաններն բռնած՝ կտանե և կնետե ծանոթ ցողուններու, հորս բնավորութեան պես դուրբաբորբոք խուրցին մեջ, վոր ծծումբի ոժանդակութեամբ ըրպեպես կըռնկեցնե ամբողջ խուրցը, խանձելով տոպրակները իրենց պարունակութեամբ:

Դեռ ականջս կծակեն խեղճ մորս աղեպատառ ճիւղերը, գունաթափ դեմքը՝ հապա... Իսկ յես դեռ հորս մարմնացած բարկութիւնը վրաս չ'իջած՝ հալիս հասեր եյի արդեն:

Բարեբախտաբար գլխիս պես դատարկ ալյուրամբարը քեն ընելով քիչ հեռուն եր կծկված, ապա թե վոչ՝ ամբողջ տունը հրո ճարակ պիտի դառնար:

Վոչ, վորքան թանգ նստեց վրաս սատանային պարգեւած պապիրոսը. և յեթե ազնիվ մայրս չլիներ...

Միթե մառդ դառնալը այսքան դժվար բան է յեղեր:

Այդ որեն այսոր՝ պապիրոս տեսնելուս, սոսկում մը կուզա վրաս: Որհնված սոսկում մը, վորմե բռնվելը անհրաժեշտ է և փրկարար վոչ միայն 7—10 տարու անբխ՝ այլ 10—80 տարիներու մեջ ճոճվող բեխավոր յերախաներուն:

VI

Փ Ո Ր Ձ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Բաց ողի մեջ ենք:

Քովս նստողը կծխե խորին ջերմեռանդութեամբ: Հարյուր տարվա սովածի նման ազահութեամբ կուլ կուտա կապույտ ծուխը, վոր անոր մրոտված թոքերուն մեջ նազանքով շրջապտոյտ մը ընելէ, անոր «կողմն աշխարհիներ»ը որհնելէ և շփոթված սրտի գլխուն հոգեցունց «պահպանիչ» մը կարդալէ վերջ՝ կվերագառնա անոր յերջանիկ քիթ ծխնելույդին և հոն մտերմական թավալումներ կատարելէ վերջ՝ պնչախոռոչներեն դուրս կժայթքե ցնձագին: (Յուր պատմական պրոցեսն ավարտած...):

Պարզ է, վոր բարեկամս կպատկանի կատաղի ծխողներու կաշեգործային, վորոնց ատուշանի սրբազան կրակը մարելուն պես՝ կմարի և անոր հոգու կրակը...:

Բայց դուք այս ծուխին նայեցեք, ուղղակի վրաս կքալե, կարծես սատանա մը կ'առաջնորդե զինքն, կարծես ծուխ քաշող մաքսիս մը լինիս:

Աջնն ձախ կ'անցնեմ, ծուխն ալ կ'ծախանա: Դիմացը կնստիմ, անոգստ, աներեսը անմիջապես կ'փոխե յուր ուղղությունը և առանց ճամբան մոլորվելու ուղղակի կոկորդիս մեջ կ'խրվի: Բերանս կ'գոցեմ՝ քթես ներս կ'խուժե (խուլիզան...) վողորմած աստված, ի՞նչ ընելու ե, կ'փախչիմ, ճակատագրիս պես յետես կ'հասնի և կ'ընես ոճիքես:

Շնչասպառ յետ կ'դառնամ և կ'ըսեմ դառնացած՝

«Օո անպիտան, ի՞նչ կ'ուզես ինձմե, քեզ խո պարտ չեմ. ալ ի՞նչ պարսկական հարկահավաքի մը պես յետես ընկած հողիս կ'հանես, անխիժված, թող մեկ շունչ քաշեմ»:

VII

ԹՈՒՉՈՒՆՆԵՐԸ ՉԵ՞Ն ԾԽԵՐ ԱՐԴՅՈՒՔ

Վո՛հ, այնքան շատ կ'սիրեմ այս աշխուժ թռչնիկները (անշուշտ վոչ-գիշատիչները) վոր յեթե հոգեփոխության վարդապետությունը ճիշտ լիներ, յես պիտի փափագեյի մեռնելես վերջ հողիս թռչունի մը պահ տալ: Անշուշտ վոչ այն պատճառով, վոր անոնք ալ ինձ նման յերկոտանի յեն, անուշ-անուշ զեղգեղել գիտեն, այլ վորովհետև՝ այդ նախշուն թևավորները, բնության որենքներուն դեմ չեն մեղանչեր բնավ, և իրենց պատվական թոքերը չեն հարստահարեր ոևե ծուխ ու մուխով, այլ կ'բանան դայն մաքուր ողին, անոր համար ալ յերկար կ'ապրին, թող շատ ապրին: Իսկ յեթե, տեր մի արասցե, անոնք ալ մեղմե վարակ-

վելով սկսեյին ծխել, վոչ միայն պիտի կարճեյին իրենց կյանքը, այլև վոր անդամանելին ե, խապտելով փճացնեյին պիտի իրենց հրաշալի ձայնը, և մենք պիտի զրկվեյինք վայելիլ անոնց «մեխանուշ դայլայլիկները»:

Ինչպէս չսիրել այդ կենդանի սավառնակները, վորոնք հանուն կ'ընի, հայրենասիրության և կուտուրայի ուսմբեր չեն թափեր իրենց նամաներու գլխուն... և շահավետ շուկա մը, քարյուղի մը հոր, կամ յերկաթ, քարածուխով յղի բլուր մը հարևանի ձեռքեն հափըտակելու համար, համաշխարհային սպանդանոցներ սարքելով՝ ծովի նման արյուն չեն հոսեցնել:

Թող կեցցեն ուրեմն մեր անդավաճան թևավոր դաշնակիցները, վորոնք գայթակեցնելու համար, աշխարհս դեռ սատանա մը չկրցավ ծնել...

Բայց... յերբեմն կասկածի նման բան մը կանցնի մտքես: Չի՞րի՞ թե անոնցմե վոմանք, իրենց մեծերեն քաշվելով գաղտագողի կ'ծխեն:

Այդ բանը ստուգելու համար գիշերները հաճախ, խանդոտ ամռախններու նման, կ'խառնեմ անոնց ծոցն ու գրպանը, գրպանը... ներողություն, անոնց բույները կ'խուզարկեմ, վոչ թե կ'ապիտալիստներու դեմ ուղղված անլիզալ գրություն մը յերևան հանելու՝ այլ հասկանալու, թե արդյոք, ծխախոտի մանրուկը, կամ մոռացմամբ թողնված պապիրոսի մը ծայրամաս՝ ընկած չե՞ անոնց հատակին վրա: Ի գո՛ր...:

Կամ ցորեկները յերկար հեռադիտակը ձեռիս՝ ակնապիշ, անցնող կուռնակներու կարավանը կ'զիտեմ, տեսնելու թե արդյոք, անոնց կարգապահ կուռցներեն դավաճան ծուխի մը քուլա չբարձրանար: Դարձյալ ի դուր:

Այն ատեն անձկազին հարցում մը կուղղեմ ինձի, թե արդո՞ք՝ այդ կարավանը չանցնով Սոխումի գեղանազորեն ծփացող ծխախոտի արտերու վրայնս...

Յեվ կամ թռչուններու չծխելն ներելի՞ է հետեցնել, թե անոնք բնավ դարդ, հոգս ու մտածմունք չունին, և դանոնք փարատելու համար՝ սուր կարիք չեն զգար փարելու ծխախոտի հրաշագործ վոտներուն:

VIII

ՅԵԹԵ ԾԽՈՂԻՆ ՍԻՐՏԸ ԼԵԶՈՒ ԱՌՆԵՐ...

Յեթե հանդուգն ավազակ մը փախցներ յերկնքի գեղեցկուհին—արևը, և կամ, յեթե նա վոռե պատճառով սրտի պայթում ունենար, ի՞նչ պիտի պատահեր հողազնդիս հետ:

Անարև հողազունը գուցե առժամանակ մը կարողանար գոյութիւն մը քաշ տալ, մինչ մարդուս սիրտը՝ այդ հոյակապ և հրաշալի գործիքն, յեթե ըրպէ մըն ալ կանգ առնէ՝ այլևս «հող ելիր քար դառնաս» չկա, կա միայն անվերապահ վոտաձգում—(մահ):

Յես առաջներ՝ զարհուրելի տգիտութեամբ կկարծեյի, թե ծխախոտը լուրջ փաստ մը չկրնար հասցնել սրտին, և այդ նշանակալից տխմարութեանս համար՝ բժիշկ-վարժապետես վարձատրվեցա փառավոր գերոով մը... մինչ այդ անիծված ծուխը՝ վոչ միայն կ'անդամալուծէ մեր սրտերը, այլ և կ'ազդէ նույն իսկ մեր ուղեղներու ուղղութեան վրա և մեր ջիղերու մեջ առաջ կբերէ անուղղելի ուսակցիս:

Յեթե բնութիւնը առաջուց իմանար, թե մարդիկ իրենց անմտածողութիւնը ծխելու չափ առաջ պիտի

տաննն՝ անշուշտ պիտի պարտավորվեր, ծխողներու թռքերուն մեջ քանի մը տասնյակ սրտեր շարել, վորպեսզի մեկն փճացնելի հետո՝ մյուսն սկսեյին բանեցնել: Վո՞ վոճրապարտ թյուրիմացութիւնս...:

Յերբ կտեսնեմ, վոր ծխող մը ծխած պահուն կհազա սաստիկ, բայց դարձյալ կծխէ. ցավն կծիկ-կծիկ յեկող սիրտը բռնած կխեղդվի՝ բայց դարձյալ կծխէ, կշփթվի մ և չեմ կրնար վորոշել, թե այդ պահուն լա՞լ կհարմարի ինձի, թե խնդալ: Յեվ իսկույն յերջանկահիշատակ Նասրեդդին խոջան միտքս կուգա, վորը յեռանդազին կկտրէ այն ճյուղը, վորուն վրա կհանգչի յուր հակափորը:

Յեվ յերևակայեցեք, վոր այդ տիպի մարդիկ, հաճախ յերիտասարդ, անժամանակ կմեկնին այս գեղեցիկ աշխարհն, վորովհետև... չեն կրնար յեղեք ծխախոտն ձեռք քաշել: Վո՞ արգահատելի վողորմելիութիւնս:

Ուրեմն ամենն առաջ, դուք ով վառվոտն յերիտասարդներ, դուք՝ վոր ներկայն ավելի ապագային կպատկանեք՝ սպաննիչ մոլութեան մը ենթարկվելով պատերազմ մի հայտարարեք ձեր ամհնաանձնվեր բարեկամ սրտին դեմ, վոր յուր ծնած ըրպէից մինչև յուր վերջին շունչը կտքնի չարաչար վորպեսզի չկտրի ձեր կենաց թելը: Մինչ դուք ով ապերախտներ, կարծես ձեր յերախտազիտութիւնը արտայայտելու ուրիշ վայելուչ ձև մը չգտնելով՝ ամեն ըրպէ ո՞վ պապիրոսի բերնով կդադեմ անոր զգայուն սիրտը... և վորո՞ւ դեմ կմեղանչեք ուժգին, այն անգին սրտի՝ առանց վորուն դուք չպիտի կրնայիք սիրել վոչ վոքի, տանջվողի վիշտը և վսեմ դաղափարները անձանոթ պիտի մնային ձեզի:

հեղձավորներ, դուք վոր հակված եք միշտ բռնկվել գեղեցիկ աչերու սիրով, ինչո՞ւ հեռուեն վերադարձող ձեր ընկերոջ կամ սիրածին ձեր քթերու վրա չեք սեղմեր, այլ անպայման ձեր սրտերու վրա... դեռ լաված չե, վոր մեկը՝ յուր ընկեր, կինն կամ մարդկությունը սիրեր յուր... ականջներով:

Գուցե դուք դեռ չգիտեք, թե ծխողներու սրտի մկանները, դավանափոխության հետևանքով կճարպակալվին և կկորսնցնեն իրենց ճկունությունն և արագաշարժությունը և բովանդակութենե զուրկ գըրվածքի մը և կամ մեծ վոտներե հագնված փոքր վոտնամանի մը կերպարանք կստանան...:

Լավ, դուք վոր այժմս այլևս անգրագետ չեք և կհասկնաք ձեր սրտին դերն ու արժեքը, անոր մեջ դաշույն խրող դավաճանին հետ ինչպէս պիտի վարվեյիք...:

Վերն ե բարին, յերկար տարիներու ընթացքին, բյուր գաղտնիքներով բեռնավոր հավատարիմ սիրտ մը ծխախոտով թյունավորել, տանջել և կազմալուծել վերջ մեռցնել, թե տաք-տաք գնդակ մը ուտել:

Յեթե ծխողին սիրտը լեզու առնել՝ մենք պիտի սոսկայինք, ծանոթանալով մեր գործած դարհուրելի ապերախտության հետ, գուցե և կարմրեյինք՝ տեսնելով մեր արժանապատվությունը դերոհն հազար աստիճան վար իջած: Վո՞ անտանելի սառնամանիք...:

Գործարանատերերը, իրենց գործարաններու մատոն ու անիմները աշխատունակ վիճակի մեջ պահելու համար՝ անաղին զոհողություններ կընեն, և բարձր ամսավճարով հավատարիմ վերակացուներ և մասնագետներ կվարձեն:

Իսկ մենք ի՞նչ վերաբերմունք ցույց կուտանք դեպի մեր ամենակատարելագործված մարմին գործարանը:

Ո՞, մեր վերաբերմունքը շատ քնքուշ ե և շատ սիրալիր:

Մի՞թե չեք տեսներ, թե մենք ալ ինչպիսի հոգատարությամբ կընտրենք սպեց-խուլիգաններ—ծխախոտն ու ալֆոլը, անոնց ձեռներով փշրելու մեր հոյակապ գործարանին անիմն ու մատոնները, անոնց կանոնավոր գործունեյությունը խափանելու վսեմ նպատակով:

Կարծես բուրժուական հասարակակարգեն բղխող թշվառությունն ու զրկանքները բավական չլինեյին քայքայել մեր կազմն և առողջությունը:

Յեկ շատ իզուր, մեր թոքերն ու սիրտը ձեռք-ձեռքի տված, գերմարդկային ճիգեր կթափեն մաքուր արյուն հոսեցնելու մեր Ասիաբնակ յերակներուն մեջ, և մարսողական գործարանները սնունդ մատակարարելու մեզի--բարեկենդանի խեղկատակներուս, (մեզա... մեզա): Արդյո՞ք, մենք արժանի՞ յենք այդպիսի վեհանձն վերաբերմունքի մը:

IX

Մ Ա Հ Ա Պ Ա Տ Ի Ժ

Որ մը, ընկ. Վռամին հետ սլարտեզը նստած՝ թերթ կարդալով կհանգստանայինք, յերբ ջննտվմեն մը, գլանակը ձեռին, սարի մը պես առջևնիս տնկվեցավ և 12 դյուիմանոց բերնին մեջ ամբարած ծուխը ամենայն անքաղաքավարությամբ դեմքերնուս փչելով հարցուց, ի՞նչ նորություն կա թերթին մեջ:

Վռամը բռնկվելով և թերթը ծանոթ փորձանքի
յերեսն ի վեր շարժելով՝

— Ո՛վ անճոռնիություն, մաքուր ող շնչելու հա-
մար յերկի՛նք համբարձելու ե: Ա՛խ, այս 5 40պեկի
համար սատկող գարշելիները...:

— Հանդարտվի՛ր սիրելիս, և բարի յեղիր ըսել ինձի,
թե՛ յեթե այդ նզովից արժատ բույսին չարաշուք հե-
ղինակը—Նիկի-ն¹⁾ ձեռքդ իջնար՝ ի՛նչ պիտի ընեյիր:

Վռամը 3 մղոն յերկարությամբ ախ մը քաշելով,

— Ի՛նչ պիտի ընեյիր... վագրի մը պես վրան պիտի
իջնայի և յեղունգներովս բզիկ-բզիկ պիտի ընեյի
զինքը. թող յերթար ու հասկնար, թե ի՛նչ կնշանակե
սեվ գլուսով մը՝ մարդկանց որերը սևացնել և տարին
միլիոնավոր դժբախտներ անդիի աշխարհը ուղարկել
հաճախ՝ առանց... թոքերու:

— Վագ՞ր... վո՛չ, յես ավելի հանգամանորեն կպատ-
ժեյի զինքն, կխեղդեյի յուր իսկ հեղինակած ծուխին
մեջ, ճիշտ այնպես՝ ինչպես որ մը, քիչ մնաց խեղդեյին
քեզ քու հոգեկիցներդ:

— Վո՛հ, կ'աղաչեմ, խնայի՛ր ինձ, հիշելն անգամ
սարսափելի ե...

— Իսկ զիտե՞ք, թե վորքան փափագելի յե ինձի և
ընթերցողներուն, լսել այդ հետաքրքիր պատահարի
պատմությունը.

— Գիտես ա, ժողով եր... Անանկ ժողով մը՝ վոր
յեթե չզուժարվիր, վայր կուգար և մեզ բոլորիս կհա-

¹⁾ Յերկրաչափ Նիկի-ն նիկոտինի հարգո հեղինակն է, մարդ-
կության ամենամեծ բարեբալը—այն փուճ կենդանին՝ վոր ծխա-
խոտի սերմերը Ամբրիկային բերելով ցանեց Յեվրոպայի... աչքե-
րուն մեջ:

վաքեր ու կտաներ: Չեմ հիշեր, թե այդ ողովին մեջ
աստված կա՞ր թե վո՛չ, բայց ազգ ու հայրենիք ուզա-
ծիդ չափ: Ուրիշ շատ բաներ ալ կային, «կոտորած»
անգամ կը գտնվեր:

Ձմեռն եր: Դուրս քամին կ'ոռնար, իսկ ներս—փակ
սենյակին մեջ—սիգարի ծուխն եր, վոր վիշապի մը
պես կզալարվեր, ամպի մը պես կթանձրանար և զար-
հուրելի արշավանքներ կ'սկսեր գործել, արդեն ինք-
զինքը կորսնցնող, վողորմելի թոքերուս մեջ: Վոչի՛նչ...
50 հոգի էյին անոնք և 45-ն միայն կծխեյին:

Յերախտապարտ թոքերս հավիտյան չեն կարող
մոռնալ այդ գերերջանիկ որը՝ յերբ մեկը մյուսին
տեսնել կարողանալու համար առնվազն քսան աչք ու-
նենալու եր:

Յերբ սիրտս ուրախութենն խելահեղ՝ անեղ թոխչք-
ներ կգործեր և մեկ ըոպեյի մեջ՝ տաս տեսակ պար
իրարու կխառներ, կարծես գեղուհու մը մեջք բռնած
ունենար:

Յերբ՝ պաշարված սիրտ ու թոքերու ճնշման տակ,
ստամոքսս ալ լուրջ պատրաստություններ կտեսներ
ըմբոստանալու...

Յերբ անուրի գլխացավ մը ուղեղներս հիմքերեն
կցնցեր, խելքիս պուտուկի կափարիչը առաստաղ խփե-
լու և զույգ սիրուն աչերս տեղահան ընելու աստիճան:
Անպիտանը կարծես հասած ծառ մը թափ կուտար:
Ո՛Ֆ, ո՛Ֆ, ուղղակի՛ կասաստոմ:

Խո չեյի՛ կարող ժողովը կիսատ թողուլ և դուրս
թռչել, այդ սարսափելի անքաղաքավարություն կլի-
ներ: Վերջապես ամոթ ու սարսափես լեղուս փորս եր
ընկեր, կարծես յես լինեյի համաշխարհային պատե-

բազմի հեղինակը. և ճակատով մեկը չկար, վոր վեր կե-
նար ու ըսեր,

«Յեղբայրներ, խիղճերնիդ կատո՞ւնն փախցուց; բնու-
թյունը ողն այսպես չստեղծեց: Մեկ յես յեմ, չեմ ու-
զեր ծխել, ինչո՞ւ ինձի բռնի ուժով ծխել կուտաք: Այս
խո ձեր հոր սեփականությունը չէ, վոր ձեր մայրիկ-
ները ազատ իրավունք ունեն աթարով թոնտիրներ
վառելու...»

— Ճակատդ ի՞նչ կշիներ. հապա ի՞նչ ընե միևնույն
վիճակին մատնված նորածին մը, վոր լեզու չունի...
Ե, հետո՞.

— Հետո, թե ի՞նչ յեղանակով հաջողեր եյի ինք-
զինքս անկողնուս վրա ձգել, կղճվարանամ հիշել: Բայց
յերբ ինքզինքս քիչ մը գտա՝ իսկույն հրաշալի գյուտ
մը ըրի, գյուտ մը, վորուն համար, վայ թե ինձի վար-
ձատրեն... ապտակներով:

«Թե թույլ թոքեր ունեցողներուն փոխանակ մեծ-
մեծ ծախսերով հեռավոր լեռներու կատարները
մագլցել տալու, ավելի նպատակահարմար չէ՞ր լիներ
փակել զանոնք ծխառատ սենյակներու մեջ, ուր ապա-
քինումը կարող է վրա հասնել անասելի արագու-
թյամբ»:

X

ՎԱՐՊԵՏ ԽԱՉԻԿԸ

«Ահա ձեզ և վարպետ Խաչիկը, վոր յուր ծնած
վայրկյանն մինչև որս անընդհատ կծխե: Այդ իսկ
պատճառով անոր ծխված դեմքը տեսնողն՝ պիտի կար-
ծե տեսնել, թթվի կարասնն նոր դուրս քաշված՝ կի-
սախաչ և ընհատ ճակընդեղ մը...»

Յեթե անոր մշտահույզ և հարբուխապատում քիթը
գունահի մը տեսներ՝ իսկույն պիտի հափշտակեր զայն:

Անոր անբարեհույս աչերը քիչ կարմրած եյին, քիչ
ալ դուրս թուած, կարծես պարտապահանջին մատները
նոր վար իջած ըլլային անոր կոկորդին վրայնն:

Բիբերը առանց խոշորացույցի կարելի չէ նշմարել:
Խեղճին կուպերը թանձրացեր ու կարծրացեր են և
զժվարությամբ կշարժվին:

Ծանրացած և յերբրվող ուղեղին մեջ լավ միտք մը
մտնելու համար՝ առնվազն 3 ամիս հերթի կանգնելու յե:

Վողորմելիին ձեռները կողոպտան, կարծես մալերիայով
ծփուն ճահճի մը ավր բուսած լինին:

Ատամները սեցեր յեն:

Արտասահմանն ստացած ընտիր և ձայնագրված
հազ մը ունի, և զայն գուրգուրանքով կպահե իր խրզ-
խզացող կուրծքին տակ: Հազ մը, վորուն վոչ սկիզբն
է հայտնի և վոչ ալ վախճանը:

Քունը անհանգիստ է: Սև ոճերե և գիշատիչ գա-
զանների հարձակման կ'ենթարկվի ամեն գիշեր: Չիղերը
այլասեռված են:

Անուշահոտություն ներշնչելու համար պարտեղ իջ-
նել հարկավոր չէ, բավական է մոտենալ կարպետ Խա-
չիկի անդրջրհեղեղյան հազուստներուն և անոր քեխ...
բուրաստանին:

Յեթե հավատանք չար լեզուներուն՝ վ. Խաչիկը այս
աշխարհս իջեր է մեռած, և ծնողները անոր շունչ տալ
հաջողեր են միմիայն, անոր յերեսներուն ծխախոտի
ծուխ փչելով:

Բայց այնքան ել դյուրին չէ շարժել այդ «բարե-
մասնությանց ժողովածուի» բարկությունը:

Որինակ՝ յեթե ըսեն իրեն՝ թե դուն տգեղ մարդ մըն ես, կինները բնավ չպիտի հալինին քեզ»: Բնավ չպիտի բարկանա:

Յեթե կրկնեն՝ թե «դուն շատ անպետք և հետադեմ մարդ ես, ժամանակը քեզմե ոգուտ մը քաղած չունի բնավ»: Յերբեք տերը չի դառնար:

Թե «դուն կոպեկ մը չ'արժես, վորովհետև գրել-կարդալ չես գիտեր»

Ամենևին չի վշտանար:

Թե՝ «դուն ապուշ մըն ես»: Առանց առարկության կընդունի:

Թե՝ «իդուր ող կ'ապականես»: Չհակառակվեր:

Թե՝ բերանդ հայհոյանքի բույն մըն ես դարձուցեր, բույն մը՝ վորուն մեջ հոպոսն անգամ չպիտի գիջանի բնակվել...:

Թե՝ «դուն ստախոս ես, նամուս չունիս, գազանաբարոյ յես, գազան ես»: Չպիտի վշտանա և բերանն անգամ չպիտի բանա:

Մի վախնար, ավելի մանրամասնությանց մեջ մտիր և ըսե քաջաբար.

«Հափշտակիչ, քարը պակաս կղնես, արշընը պակաս կքաշես, ագռավը սոխակի տեղ կքշես և թակարդդ ընկած սագի կաշին անգամ կպլոկես»: Չբողոքեր, կփրջվի իսկ...

Քիչ ալ առաջացիր և մերկացուր գինքն ամբողջովին:

Թե՝ «մատնիչ, յեղբայրդ ստակով ծախեցիր, մարդասպան կինդ ծեծելով մեռցուցիր, տղադ ծուխով խեղդեցիր, աղջիկդ դրամով վաճառեցիր, հարբեցող, Հուգայի արծաթով գինի, ողի առիւր, տրաքվեցար և փո-

ղոցները իյնալով կլիներու ճամբան կտրեցիր և հազար և մեկ խայտառակութուններ ըրիր:

Հոնքերն անգամ չպիտի շարժես:

Բայց յեթե տեր մի՛ արասցես, պապիրոս վորոքած պահուն անդգուշությամբ թևերուն դպչիս և ծխախոտը թափես, և կամ ծխած պահուն սխալվելով հանդգնես դիտողություն հայտնել, ըսելով՝ «Յեթե այդ գահրու-մարը չծխես չլինե՛ր...» Ալ բանդ պրծնվի: Վոչ միայն սաստիկ կրարկանա, այլ և Բաբելոնի հնոցին պես կըրորքովի և յեթե առջևեն չփախչես՝ այնպիսի հարված մը կիջցնես քթիդ, վոր անոր տեղն անգամ անհնար կլինի վորոշել ..

— Ինչո՞ւ, պիտի հարցնեք, արժանապատվության գզացմունքը պապիրոսին մեջ միայն կընակվի:

— Վոչ, վոչ, դուք դեռ յերեսաներ եք, և չգիտեք, վոր խելք գլուխ մարդը յերբեք չպիտի համարձակվի դպչել ծխախոտի քեֆին, վորովհետև անոր այդ ջիղք չափազանց գզայուն է, այնչափ դգայնիկ, վոր դեռ մատը վրան չբրած կճչա, ճչալ՞ վորն է, կ'որոտն և հաճախ... կ'ուշաթափվի:

XI

ՍԱՎԱՌՆՈՂ ՊՐՈՊԱԳԱՆԴ

Ձեմ գիտեր, ինչո՞ւ կ'ուշանա սավանակս, վորուն վրա կանգնած՝ թռուցիկներ շաղ պիտի տայի վողջ հողադունդին վրա հետեյալ իմաստով:

«Քաղաքացիներ, սթափվեցեք:

Թոթափեցեք ամեն կարգի շղթաներ ձեր վրային:

Գեղեցիկ խիզախութեամբ մը փշրեցեք հին բռնակալի, այդ չափեն ավելի շփացած աշխարհակալի (զիտեք ա, ծխամուրեթյան) թշուռավոր ատամները:

Ձեր թոքերու դռան առջևը կանգնած՝ արթուն հըսկեցեք, և թույլ մի տաք, վոր կազմալուծող ծուխ մը ներս թափանցե անոր սրբատաշ դռներեն ներս և փճացնե ձեր կենաց հուրը բորբոքող հրաշալի բուքսը:

Մի թողուք, վոր վոտից ցզուր կեղծ բարեկամ մը, ձեր միամտութիւնն ու թուլութիւնը շահագործելով՝ կողոպտե ձեր առողջութիւնն ու գրպանը:

Ձեր սրբազան գրպանները՝ քալանիչներու ցարժական գորանցներու մի՛ վերածեք:

Քաղաքացիներ, բավական չե՞ վորքան բարի սովորութեան մը համաձայն՝ ձեր ճաշերուն և կիսաճաշերուն պապիրոսով մը վերջակետ դնելով՝ կապեք ձեր ախորժակին ձեռներն ու վոտները և ամենայն անամուսութեամբ յերթաք ու բժշկին դանգատվեք, թե «ախորժակնիս կորսնցուցեր ենք... և այլն»: Իսկ յիթե Դուք կփափագեք անպայման շուտ մեռնիլ՝ ավելի աշեկ չե՞, վոր մեռնիք ազնիվ նպատակի մը համար:

Ահա 50 տարիներն ի վեր, հետիոտն աշխարհիս շրջանը կընեմ, բայց քաջ մարդասեր մը չտեսա, վոր յերթար ավազակին դուռը ծեծեր, զայն կառքով իր տունը հրավրեր և իր թանգանոց վերարկուն իր իսկ ձեռքով վրայեն հանելով՝ անոր ուսերուն փոքր...:

Բայց դուք այս մարդուկի խելքին նայեցեք: Քնանալն առաջ վար կ'իջնե, փողոցի դուռը ամուր կփակե: Վեր կ'երն և խնամքով կկողպե սենյակին դուռը: Հա-

ձախ ադով ալ չբավականանալով՝ ձայնավոր շուն մըն ալ կկապե դռան առաջ, վորպեսզի յերևելի և աներեվույթ թշնամիները սենյակը մտնելով բան մը չգողնան անկե: Մինչ այդ միևնույն զգուշ արարածը յուր ամենամեծ թշնամին, գողերեն ամենաթունդը ներս կմոռնա: Յե՛վ վոչ միայն ներս կմոռնա, այլ և ծորող փայտայանքով մը կպառկեցնե զանոնք արծաթյա, փղոսկրյա և նույն իսկ վոսկյա անկողին—տնակներու մեջ (ծխատուփ) վորպեսզի չլինի թե քամի առնեն, կամ քնհատ մնան և առավոտ վաղ-վաղ չկրնան շարունակել իրենց սուրբ գործը...

Դե, ինչե՞ և նման:

Ահա, թշնամին յետևնիդ ընկած՝ կհալածե ձեզի, չեք կարող փախչիչ, շունչերնիդ կկտրի, կհևաք:

Սիրուհինիդ ձեռներնեդ պրծած կփախչի՛, չեք կըրնար յետեկն վազելով բռնել, կկտրվի շունչերնիդ, կհեվաք:

Հանուն գաղափարի մը հաղթանակի՝ բլուր մը պետք և գրավել: Ձեր ընկերները արծվի մը պես կթուչին, մինչ դուք բլուրին ստորտը փռված կհեվաք:

Հեվացեք, սիրելիներս, հեվացեք, սիրտը բռնված ծոփ ալ կհեվա, հեվացեք, ձեր տեղն ե. ո՛վ խնդրեց ձեզմե, վոր ձեր մոր մաքուր կաթին ծխախոտի թուխ խառնեք:

Քաղաքացիներ, մի՛ մոռնաք, վոր Չուրը կխեղդե ձեզ, յիթե հանկարծ գետը իյնաք և լողալ չգիտնաք:

Բուքն ու փոշին¹⁾ ալ կխեղդեն:

Գինին և ողին ալ: Վո՛չ, վո՛չ, անոնք չեն խեղդեր, այլ... կխեղդմխտեն:

1) Մանուկանդ ծխախոտի:

Կախաղանի թոկն ալ կխեղդե, յեթե այդ վիզը հեղափոխականի մը պատկանի և հակահեղափոխականի մը ձեռքը իյնա:

Մուկն ալ կխեղդե, կհասկնամք, կամ կ'ուզեք հասկնալ. ծխախոտի ծուխը ըսել կուզեմ: Ձեռներ չունի կխեղդե, ամենուն կխեղդե, ամեն տեղ կխեղդե: Ավելի աղեկ չե՞, վոր դուք խեղդեք զինքն: Մի վախնաք, այդ ավազակի խեղդումեն արյուն չհոսիր... կվայելե՞ ձեզ այդքան ֆլասակար մեկը վողջ թողուլ:

Կիտփազեք անգամ մը տեսնել ձեր մտերմի ներքին կերպարանքը, սիրուն պատկերը ըսել կ'ուզեմ: Ձեր ծխամորճը շարդելով Ձ հավասար մասի բաժանեցեք, զարշելի բոլոր մը կ'արձակե, վոչի՛նչ... քթերնիդ դեմը տվեք:

Չզվելի կերպարանք մը կուզա խառնելու ձեր գեղեցկատենչ սիրտը, վոչի՛նչ, կարևորութուն մի տաք, և կամ... իսկույն լուսանկարեցեք:

Սեփ-սե գույն մը աչքերնի՞դ կծակե, վոչի՛նչ, կոպ վարադույրը վար թողեք:

Նեղճ թոքեր, ինչպես չ'արդահատել ձեզ վրա...

Քաղաքացիներ, յեթե կկարծեք, թե քոֆալս ձեռք բերելը շատ դժվար բան է, կսխալվիք: Բավական է խնամքով իրար խառնել քիչ մը ծխախոտ, քիչ մըն ալ ողի, քիչ մըն ալ անդգուշութուն և... միֆրոպասարած նանն մը. քիչ մըն ալ անհոգութուն վրան ավելցնելուն պես՝ առաջի կարգի քոֆալսն պատրաստ է արդեն...:

Ուրեմն արիացեք և ալ մի ծխեք, վոչ ծխախոտ, վոչ մախոտկա և վոչ ալ թամպաքու, յեթե անոնք ազնվականության հաղար վկայական ալ դուրս քաշեն իրենց բորբոսնած գրպաններեն:

Ցույց տվեք, վոր իբրև կատարյալ մարդ կատարելապես կարող եք իշխել ձեր վրա:

Ազատեցեք ձեր թոքերը, սիրտն ու շիղերը այդ գիշատիչ իմպերիալիստներու մահաոխիթ գգվանքներեն: Տրորեցեք ձեր թշնամին ձեր հաղթական վոտներուն տակ, թող անոնց դիակներու վրա ծածանի ձեր քաջության դրոշակը:

Ուրեմն՝ ո՞ն հառաջ, միացյալ ճակատով, դեպի վերջնական հաղթանակ:

Ապրին Յեվայի ճերմակերես և ճերմակաթոք թոռնիկները¹⁾, մեր բանակը ստվարացնող քաջարի մարտիկները:

Թող կորչեն ծխախոտի գլանակները:

Կորչի թուլությունն ու վորկրամոլությունը.

Կեցցե՛ մաքուր ոդ:

XII

ԱՆՃՈՌՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ

— Չե՞ս ամչնար:— Ինչո՞ւ պիտի ամչնամ:— Բավական չե՞ այդչափ ծխես:

— Ինչո՞ւ չպիտի ծխեմ:

— Չե՞ վոր ֆլաս է:

— Ո՞վ ըսավ:

— Արդյոք, հաշված էս, թե տարին քանի՞ հակ ծխախոտ կ'այրես և վորքան դրամ կվատնես իզուր:

— Քե՞զ ինչ, շատ լավ կընեմ և թշնամու աչքն ալ կհանեմ:

¹⁾ Չծխող կին և որիորդներ:

— Ապոստոլ, վոչ թե թշնամու՛ ալ առողջությանդ աչքը կհանես: Յեթե հայելի չունիս՝ ջրով լի դուլի մը մեջ նայիր և տես, թե այդ դեմքդ առողջի դե՞մք ե: 26 վոր վերջ ի վերջո, կարող ես վոտներդ փառավորապես տնկնլ:

— Յես այդպես դատարկ խոսքերու վոչ կհավատամ և վոչ ալ կարևորություն կ'ուտամ: «Առողջ եղան փուճ հարդը թնչ կարող ե ընել»: Պապս՝ վոր 40—50 տարիներե ի վեր կծխեր՝ չկրցամ ապրել մինչև ութանասուն տարի:

— Հրաշալի կտրամաբանես, բայց կամաց... վորովհետև վողորմելի փաստաբանությունդ յեկած հավերու ծիծաղն անգամ կարող ե շարժել: Իսկ ինչո՞ւ կմոռնաս, ո՞վ իմաստուն, վոր քու քաջառողջ պապը յեթե չծխեր՝ առնվազն 20 տարի ավելի պիտի ապրեր: Յեվ գիտե՞ք, յերբ ըոպեներն անգամ յղի յեն հրաշալիքներով, 20 տարի ավելի ապրելն ինչ կնշանակե:

Յերկրորդ՝ իրո՞ք փուճ հարդը առողջ յեղան ֆիաս մը չկրնար պատճառել: Յեկ, փորձենք: Դուն քաջառողջ յեզ մը գնիր, յես ալ կ'սկսեմ կերակրել զինքը փուճ հարդով, տեսնենք թե վո՞րքան սրտագին պիտի դառնան փուճ հարդի և յերկաթակազմ յեղանդ մարտողական գործարաններու փոխհարաբերությունները... վա՛յ թե, ամիս մը չբոլորած՝ յեղանդ պոչեն իսկ բըռնած չկրնաս դայն վոտքի կանգնեցնել:

Ա՛խ, Բողկին, Բողկին, ¹⁾ ինչո՞ւ մեռնելուդ նախորյակին, բավականե ավելի ուշացած խոստովանությունդ ըրած պահուն, հանճարեղ զլուխդ բարձրախոսի մը մեջ չկոխելիր, վորպեսզի նա ամբողջ ուժով

¹⁾ Աշխարհանշակ բրոֆեսոր:

ճշար անճոռնի փաստաբաններու ակամջներուն մեջ, թե՛ «Յերթ յես չծխելի 15 տարի ավելի պիտի ապրելի»:

Իսկ 15 տարվա մեջ՝ ինչե՞ր չեն կարող պատահել, մեծ յերկունքով մը բռնված այս աշխարհին վրա:

26 վոր դուն կարող ես տեսնել, 6 տարեկան յերեխայիդ կտրի՞ճ՝ յերիտասարդ մը դարձած:

Նա կարող ե, շեն քաղաք մը բարձրացած տեսնել յերեկվա լուռ անապատին մեջ:

Յերրորդը՝ 15 բռնավորներու միաբերան գետնի տակ անցնելը...:

Իսկ յեթե, տեր մի արասցե, յես, դու, նա, մենք, դուք, անոնք ծխելու հետեանքով 15 տարի առաջ մեռած ըլլայինք՝ մի՞թե պիտի կրնայինք տեսնել մեծն Հոկտեմբերը:

Ո՛ր... 15 տարվա մեջ վորքա՞ն խենթեր կարող են խելոքանալ:

Ստույգ վիճակագրության մը համաձայն «թողախտավորներուն հարյուրին ինսուն և հինգը ծխողներ են», ըսիր:— Այո:— Շատ լավ, ատկե թնչ կհետկվի:

— Թե՛ մինչև առաջին հազը ծխելն հանցանք ե. մինչև յերկրորդը՝ իսլամաւորյուն. իսկ մինչև յերրորդը... վո՞նիք, մանավանդ թուրակազմ մարդկանց համար:

— Շատ բարի, յեթե ծխելն այդքան վտանգավոր ե, ինչո՞ւ բժիշկներեն շատերը ուրիշներուն կ'արգելեն, բայց իրենք չեն հրաժարվիր ծխելի:

— Ադոնք սուտ բժիշկներ են: Դուք այդպիսիներուն կարևորություն մի տաք: Անոնք յերբ աշխարհ կուզան, շտապելեն կմոռնան կարևորագույն բան մը— կամք հետեռնին վերցնել, և յեթե մայրերնին հաճախ

զոռով, կամքի նմանող բան մը անոնց պորտերեն կկախեն, շատ վատ տեսակեն ըլլալուն պատճառով, կիւրթին և կմիան դայակներուն ափին մեջ... Մի վախնաք, թոքախտը այդպիսի բժիշկներու հաշիմն ալ կմաքրե: Բայց մինչ այդ պետք է բոյկոտ հայտարարել և բնավ չբժշկվել այդպիսիներու քով, վորպեսզի խրատվին և այլևս վատ որինակ չհանդիսանան: Ախ՛, այդ դետնի տակ անցնելիք վատ որինակը... Ձե՛ վոր փոքրերը, դարեր շարունակ իրենց մեծերու որինակեն վարակվելով է, վոր կծխեն, հա կծխեն, կարծես ազկե ավելի նվիրական պարտականութուն մը դոյութուն չունենար աշխարհիս յերեսին: Առանց հաշիվ տալու իրենց, թե ինչ ծիծաղելի և վտանգավոր խաղ մը կխաղան և տարին 13 ամիս կզբաղվին անձնասպանությամբ:

Ահա հեռախոսի զանգը կհնչե յերկա՛ր և մեկամաղձիկ:

Լուություն...: «Կլսե՞ք... հոգեառը ճամբա ընկեր է արդեն և առավոտ վաղ չոքելու է ձեր կուրծքին վրա»:

Դալուկ մը կ'իջնե, առողջութունն ու մահ արհամարհող, «կմեռնինք, թող մեռնինք» ըսող քաջարի փաստաբաններու ճակտին (անճոռնի):

Վե՛հ, ի՞նչ զարհուրելի շփոթութուն և իրարանցում, դուք այս դողացող ծունկերու հարվածները զիտեցեք:

Հոգեառը.—... Բարև ձեզ: Փաստաբանը,—.....: Հոգեառը.—Բարև ձեզ, ըսի:—Փաստ,—ինչու... չի... յե... կաք:

Հոգեառ.—Յեկա, վոր վերջին պարտքդ վճարես: Փաստ.— Ի՞նչ պա... պարտք, թյո՛ւ...րիմացութուն, քեզ... ո՞վ կա... կանչեց:

Հոգեառը պապիրոսի ծայրամասերը շալակեն վար բերավ և կխամեռ փաստաբանին վրա շուռ տալով՝

— Ինձի ով կանչեց... ահա հրավիրագրերդ, բոլորն ալ կնքված և ստորագրված քու պապիրոս վերորդ ձեռներովդ: Շնորհակալ չե՞ս, վոր տաս տարի առաջ չեկա... Շուռ, սպասելու ժամանակ չունիմ, որական հինգ միլլիարդ հրավիրագրեր կստանամ, շո՛ւռ...:

— Բայց յեթե յերիտասարգությանս չես խնայեր, գոնե զավակներու խնայիր:

— Շա՛տ ես ուշացեր, դուն չխնայեցիր, յես ինչո՞ւ պիտի խնայեմ, հայտա:

— Առեք, կ'աղաչեմ, բոլոր ունեցած հարստությունս առեք, անգամ կինս ու յերեխաներս... միայն թե... կպաղատեմ... գոնե քանի մը որով... հետաձգեցեք:

Հոգեառն չթողուց, վոր խոսքն ավարտեր, առավ պապիրոսի ծուխեն մաշված և սեցած հոգին և թռավ դեպի... արտասահման:

Ս Ա Ղ Մ Ո Ս Ե Ր Գ Ո Ւ Ն

Կես գիշեր ե:

Մենյակը լուսավորված ե ծերուկի մը բերնի մեջնն
վեր ցցվող ռադիո-կայան ծխամորճի մը կրակեն, վորը
մշտապես գործող հրաբուխի մը նման կժայթքեր միշտ
կրակ ու մոխիր:

«Ը՛ն՛ր... Ը՛ն՛ր... Ը՛ն՛ր...»

Յենթակային թորերն են, վոր կխոսին խոչափողին
բարեհաճ մասնակցությամբ.

Ի՞նչ կխոսին արդյոք...

Իայց մենք միտ դնենք, անկողնի մեջ նստած ծե-
րուկի սրտաբուլխ ազոթքին:

«Ո՛վ ծխախոտ, դո՛ւն ես իմ աստված, անկողիդ
հոգո՛ւն մատաղ, Ը՛ն՛ր... Ը՛ն՛ր...»

Քառասուն տարիներե ի վեր անձնագոհ և անդա-
վաճան սիրով մը կգուրգուրեմ զքեզ, քաղողիդ հոգուն
ղուրբան, Ը՛ն՛ր... Ը՛ն՛ր...

Դուն կդաննացնես բերանս, բայց հոգիս կքողցրա-
ցնես: Առանց քեզի պիտի սենար իմ որը, Ը՛ն՛ր... Ը՛ն՛ր...
ճառագ արևիդ մատաղ:

Իժիշկը կըսե ինձի, «մի ծխեր, ֆլասս ե, շուտ կմեռ-
նիս»: Ապուշին նայիր, գոնե հաց մի ուտեր, ըսեր...
հազար թոք զուրբան կընեմ քեզի ով ծխախոտ, ման-
րողիդ մատնեբուն զուրբան, Ը՛ն՛ր... Ը՛ն՛ր...

Յես կրակ կդառնամ և կխանձեմ այն անբարշտի
լեզուն, վոր կհանդգնի դպչել քու քեֆին, Ը՛ն՛ր...
Ը՛ն՛ր... գալարվող ծուխիդ մատաղ:

Թող շորերը վրայես պատառ ու պատառ յեղենն ու
յերթան, յերախաներս անոթի սկրսան, յես պիտի
ծխեմ, Ը՛ն՛ր... Ը՛ն՛ր... Յեթե յիռացող ծովեր իսկ բա-
ժանեն ինձի քեզմե, ես անոնց մեջ պիտի նետվիմ, լու-
սաշաղախ արմատիդ զուրբան, Ը՛ն՛ր... Ը՛ն՛ր... առ քեզ
մեկ ալ... Ը՛ն՛ր...

Ահա կգրեմ կտակս. ինձի ծաղկեպսակներ հարկա-
վոր չեն, պսակ մը ծխախոտի կանաչ տերևներեն
հյուսված կըավե, վորպեսզի վոսկորներս հանգստանան,
Ը՛ն՛ր... Ը՛ն՛ր...

Յեթե մայրս ծխախոտի շարժական արտ մը լիներ՝
Ը՛ն՛ր... յես անոր ստինքներեն կախ պիտի իյնայի,
Ը՛ն՛ր... Ը՛ն՛ր... և պոկ չպիտի գայի Ը՛ն՛ր... մինչև
Ը՛ն՛ր... աշխարհիս Ը՛ն՛ր... կործանումը Ը՛ն՛ր... Ը՛ն՛ր...
հը... հը... հը... հը... հը...:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Բարեկամութիւններու ճեսակցութիւններ

— Աղջիկ Սիրանուշ, երեկ նշանածդ տեսա, այդ ինչ լավիկն եր դարձեր, պարարտացե՛ր, կլորվե՛ր, թշերը կարմրե՛ր, ինչ մեղքս պահեմ, յեթե աղջիկ լինեյի՝ գուցե և սիրահարովեյի վրան...: Մի վախնար, աչքս չի հասներ, առաջ յեթե «պինչը բոնեյի» հոգին դուրս կթռչեր»: Մրսած լուսնյակի տեսքն ուներ, նիհա՛ր, քաշմշկվա՛ծ, և յեթե չեմ սխալվեր, շատ ալ կհազար, այնպես չե՛: Այդ ի՞նչ պատահեցավ վոր...:

— Այն՝ վոր առաջ որական հիսաւն պապիրոս կծխեր, իսկ այս հինգ տարի կլինի, ինչ վոր հաս մըն ալ չի ծխեր:

— Բայց այդ ի՞նչ հրաշքով:

— Որ մը՝ յերբ տեսա, վոր ալ բաներնիս բուրդ ե և ամբողջ ընտանիքով վո՛չ միայն հավուր՝ այլև ապուխտ դառնալու վտանգին տակ կգտնվինք, կըտրուկ վերջնագիր մը դրի ամուսնուս առաջ.

«Կամ դուն ծխելը կթողուս՝ կամ յես քեզ...»

— Վե՛րջ...:

— Վերջը ի պատասխան փառավոր ապտակ մը կերա, և վորպեսզի—չափազանց դժվարամարս ըլլալուն համար—սրտիս վրա չմնա, վրան սկսա տաք-տաք արցունքներ կուլ տալ, առավոտյան թեյիս փոխարեն: Յե՛վ անհ հանկարծ, ... ինձի անձանոթ զայրոյթ մը

բռնկվեցավ սրտիս մեջ. վորը անշուշտ պիտի լափեր զիս, յեթե «խո ամբողջ ընտանիքով պապիրոսի մը զոհվելու չենք» հառաջաբանով, կայծակի արագութեամբ, ամուսնուս վրա չհարձակվեյի և ծխամորճը ձեռքեն հափշտակելով՝ ծխախոտի և ծխատուփի հետ միասին, գլզլացող վառարանը նետելս մեկ չընեյի: Հոգ չե թե ուշքս անձանոթ ուղղութեամբ պտույտի գնաց և չբարեհաճեցավ վերադառնալ՝ մինչև վոր հարևաններս գլխուս վրա սառ ջուր չածեցին և յերեխաներս չճչացին ականջներուս տակ:

— Ե հետո...:

— Հետո այն՝ վոր ամուսինս փճացած մարդ չեր, խղճահարկեցավ և ըրածս իրավացի գտնելով՝ ներդուրս խնդրեց և յերդվեց այլևս չծխել:

— Շատ բան:

— Այո, այո, այդ որեն այսոր շատ բան փոխվեցավ մեր կյանքին մեջ:

Սենյակին ողբ պարզվեցավ:

Յերախաներս մաքուր ող շնչելու հետևանքով՝ սկսան անել և փթթել ազատորեն:

Ամուսնուս ախորժակը բացվեցավ: Սկսավ կարգին ուտել, խմել, քնանալ, որ ավուր առաջ գալ և լեցվել: Հազն ալ կորավ՝ խորխոս ալ հետ... և այժմս այն աստիճանին հասեր ե արդեն, վոր յեթե մատի մատանին հանե՝ աղջիկներն անգամ պիտի սկսեն ուրախանալ զինքն սիրաշունչ նամակներով:

Փառք կորովիս և վճռականութեանս, այլևս կուրացնող մատախուղ մը, որ ցերեկով չիջներ սենյակիս մեջ, և յես հատակորեն կարող եմ տեսնել վերածնված ամուսնուս և սիրունիկ ճուտերուս գեղեցիկ պատկերները:

Ի այց... Ինձ անհրաժեշտ եր յերկու տարվա համառ
 պայքար, մեր անկողին, վարագույր, հազուստ, դուռն
 ու յերգիքեն վանելու, ճանճային աներեսությամբ
 անոնց կարծ ծխախոտի գարշելի հոտը:

Յեվ յերջանիկ եմ հայտարարիլ, վոր այսոր, ամու-
 սինս որական տասն անգամ այս ազատարար ձեռներս
 կհամբուրեմ, ի նշան շնորհակալության:

— Թող համբուրեմ, հոգիս, համբուրեմ թող, դուն
 ալ անոր ճակատը համբուրեմ, վորովհետև արժե, վոր
 յերկու կտրիճներ միշտ համբուրեն զիրար...

Վ Ե Ր Զ



«Ազգային գրադարան»



NL0273123

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՍ

1. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԻՖԼԻՍ, 1909, տպ. «Շրոմա» Էջ 48 (սպառված).
2. ԽՈՐՏԱԿՎԱԾ ՔՆԱՐ, (բանաստեղծություն) ԹԻՖԼԻՍ, 1918, տպ. «Պրոգրես» Էջ 128, (սպառված).
3. ԴԵՊԻ ԺՊԻՏ, (յերգիծանք արձակ) ԹԻՖԼԻՍ, 1924 4-րդ տպ. Պուշկ. փ. № 3. Էջ 48:
4. ՇՓԱՑԱԾ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ

Դիմել պետական գրախանութները և հեղինակի մոտ
 Тифлис, под. Кибальчича № 16 (бывш. Сурп-Ка-
 рапетская под.)